

ԵՐԱԺԻՇՏ



Երևանի Կոմիտասի անվան
պետական կոնսերվատորիա

Yerevan Komitas
State Conservatory

Ереванская государственная
консерватория им.Комитаса

Լույս է տեսել ISSN 1829-0469 թղթային տարբերակը 2005թ. դեկտեմբերի 25-ից (221)

#5 մայիս 2024

Գ
Ի
Տ
Ա
Ժ
Ո
Ղ
Ո
Վ



«Արվեստի հարցերը ԱՐՇԱԿ ՉՈՊԱՆԵԱՆԻ «Անահիտ» հանդեսում»

ՀՀ ԳԱՄ-ում ներկայացվեց «Անահիտ» հանդեսի ներդրումը հայ արվեստագիտության առաջընթացում

2

Ֆրանկոֆոնիայի միջազգային օրերի
փառանքները գաղափարապես համադրվեցին
Ֆրանսիա Պուլենցի ծննդյան 125-ամյակին



ԿԳՄՍ նախարարի տեղակալներ՝ Սրբոբ Մարտիրոսյանը, Դանիել
Դանիելյանը, Հայաստանում Ֆրանսիայի արտակարգ և լիազոր Դեսպան
Օլիվիե Դրեյֆուսը, Հայաստանում Կանադայի արտակարգ և լիազոր
Դեսպան Էնդրյու Թորները, ղիվանագետներ, պաշտոնապար այլ անձինք

5

«Ամեն անկա կոչված եմք հայրենիքի մի կրտսեր
սրահեղու»։ ազգային
երաժշտական հյուստածոն «Տաղարան»-ից



«Տաղարան» անսամբլ, ղեկավար Սեդրակ Երկանյան

5

Մայիսի 22-ին
գերմանացի եզր
մեղիսան արժևորեց
100-ամյա Շառլ
Ազնավուրին



8

«ՉԱՉԻ
ԱԶՆՎԱՍԿԱՆ»
ԳԱՐԻ
ԲՅՈՍՍՅԱՆԻ
ԽՈՐԱԽՈՐՀՈՒՐԴ
ԵՎ ՈԳԵՂԵՆ
ԱՇԽԱՐՀԸ



6

Միջազգային գիտաժողով Մանկեր
Պեքերբուրգի Ն. Ռիմսկի-Կորսակովի
անվան կոնսերվատորիայում



ԵՊԿ պրոֆեսոր Սվետլանա Սարգսյանի ելույթը

4

Երևանի Կոմիտասի Անան Դերական Կոնսերվատորիայում վրեղի ունեցած դասախոսություններ և փառատոնություններ

2024 թվականի Յունուար-Փետրուար ամսին երևանի գտնվող ԷրաճիՇՏ-ի Անան Դերական Կոնսերվատորիայի հրատարակչության տնօրեն՝ ԵրաճիՇՏ-ի տնօրեն Գոհար Շաքոյանի կողմից հրապարակվող մասնակցություն Երևանի Կոմիտասի Անան Դերական Կոնսերվատորիայի հրատարակչության 20-ամեակին նվիրված ծրագրին, որը տեղի ունեցավ 2024 թվականի յունուարի 28-ին, ժամը 15:00-ին, «Աննո Բարաջանյան» համերգասրահի 1-ին հարկի դահլիճում: Հետադարձ էր այն ամենը ինչ կազմակերպվել էր հրատարակչության պատասխանատու տնօրեն՝ ԵրաճիՇՏ-ի տնօրեն Գոհար Շաքոյանի կողմից, որը իր ողջոյնի խօսքից և հիմնական ներկայացվելուց յետո, պարբերաբար ներկայացրեց հրատարակչության 20 տարիների գործունեությունը, մեկընդմիջ հրապարակվող օրապարբերական ելույթ ունեցողներին և կատարողներին: Վերջում տեղի ունեցավ պատշաճ հիմնականություն, հրատարակչության պատասխանատուի կողմից, որի ընթացքում եղան ծանոթություններ յատկապես Արցախից տեղահանված երաժշտագետի հետ:

Ցանցով օրապարբերական հրապարակվող ԵԴԿ-ի հրատարակչություն, որպեսզի ներկայ գտնվի և մոտիկից ծանոթանալի այն ամբողջ միջոցառումներին, որոնք կազմակերպվել էին հրատարակչության կողմից այս 20 տարիների ընթացքում: Ծրագրին ներկայ գտնեցին Կոնսերվատորիայի ղեկավար՝ տնօրեն Սոֆիա Յովհաննիսյանը, գիտական գծով պրոֆեսոր՝ տնօրեն Մովսիսյանը, դասախոսներ և հրապարակներ: Վերջում եղավ պատշաճ հիմնականություն և մտքերի փոխանակում:

ԵԴԿ-ի հրատարակչության գործունեությունը շատ կարևոր է և նրա ներդրումն ու ծախսը հայ երաժշտության և համաշխարհային երաժշտության ոլորտներում արժանի է գնահատանքի: Այն հնարավորություն ունի առկա ընդարձակելու, քանի որ կան ազնիւ, բարեխղճ և իրենց գործին նվիրված աշխատողներ: Գովեստի և գնահատանքի արժանի է ԵԴԿ-ի հրատարակչության պատասխանատու՝ երաժշտագետ տնօրեն Գոհար Շաքոյանի սերն ու նվիրումը հրատարակչության և կազմակերպչական աշխատանքներին, որի սիրով, նվիրումի, եռանդի ու աշխատասիրության շնորհիվ է որ հրատարակչություն

ներկայացնելու իմ աշխատանքները, ինչու չէ նաև հաշվետու լինելու նրանց, որոնց ուսուցանած գիտելիքներով և կրած աշխատանքների ու ներդրումների շնորհիվ կարողացել եմ սովորել, իրացրել, և աշխատում եմ իմ ուժերի ներածին չափով ուսումնասիրել և ներկայացնել թեմաներս գրառող կամ բանառող ձևերով:

Դասախոսության համար օր ճշուտ, 2024 թվականի Փետրուարի 6-ը, Կոնսերվատորիայի ագլուտիկ դահլիճում, որն իմ ուսանողական տարիներին կոչում էր Երրորդ դահլիճ և Հայկական ժողովրդական Նազարանների նազարանի փորձերն անց էին կացում այդ դահլիճում, հարազատ դահլիճ որը հետագային նորոգվել և գինել է համապատասխան սարքառումներով, ինչը բաականին ուրախալի է:

Ծրագրի սկզբում տնօրեն Գոհար Շաքոյանը ներկայացրեց ինձ, իմ կենսագրությունն ու գործունեությունը: Պատմելով այն մասին թե՛ «Երաժշտական Հայաստան» ամսագրի շնորհիվ է, որ ծանոթացել եմ և տնօրեն Գոհար Շաքոյանը մի այլ յոդանագրի միջոցով, և այսպիսով կարևորում է հրատարակչության գործը: Այս ներկայացրեց ծրագրի ընթացքը որի ընթացքում ներկայացնելու էի «Նոր Ջուղայի եկեղեցական զանգակը», «Նոր Ջուղայի Ս. Ծննդեան որմնակարները», և «Անանդական երգեցողությունը»: Դասախոսությունները՝ որոնցից գլխավոր, «Նոր Ջուղայի

գոթինն է մանուկ Յիսուսին, սա պարսկական մանրանկարչության ոճով է նկարված, իսկ միսը միակտոր յախճասալի է, որում պատկերված են երեք մոզերը պարսկական տարագով: Ծրագրի աւարտին ներկաների համար ցուցադրեց Նոր Ջուղայում ներկայիս եկեղեցիների լուսանկարներից ընտրված նկարներ, որոնք պայդների ձևով ցուցադրություն էր, որն ուղեկցում էր հանգուցեալ Լուսինե Ջաքարեանի «Մուր-տուր» երգի կատարմամբ և եկեղեցիներն իմ ներկայացնելու հետ համատեղ: Այս պայդները անցեալ տարի պատրաստել է ընկերուհիս տկն. Մարինե Մուրադեանը (Միթթարեան):

Վերջում տկն. Գոհար Շաքոյանը շնորհակալություն յայտնեց և նվիրեց այս դասախոսության համար պատրաստված յայտարարությունը, որը ԵԴԿ-ի հրատարա-



Գոհար Շաքոյան



Մամոջ Մարաշյան, Լարիկ-Յովհաննիսյան, Մամոջ Հուսնյան (քանտանայրուհի), Բրիտին Ավագյան (անթուրանայրուհի)



Հայկանոջ Ավերիս, Ռիթա Մուշեղյան, Ջենի Ասարյան, Մամոջ Մարաշյան, Լարիկ-Յովհաննիսյան, Գոհար Շաքոյան, Կարինե Բրուկյան, Էրիկ Արյան

այսպիսի արդիւնք է արձանագրել: Շնորհակալ եմ Ջեր այս տարիների սիրով ու նվիրումով աշխատանքի համար և վաստակի համար, որից օգտուել եմ նաև մենք՝ սփառքահայ երաժիշտներ:

Կուգեմ մի քանի խօսք ասել այն մասին, թե՛ «ԵրաճիՇՏ-ի Հայաստան» ամսագիրը ինչ կարևոր դեր է կատարում հայ երաժիշտների համար թե՛ Հայաստանում, և թե՛ Սփիւքում:

«Երաժշտական Հայաստան» ամսագրի շնորհիվ կապեր ու ծանոթություններ են հաստատում սփառքահայ և հայաստանցի երաժիշտների միջև, սա մի այլ կարգի հոգևոր ու մշակութային կապ է, քանի որ նոյն կամ տարբեր նիւթերը, աշխարհի տարբեր վայրերում ուսումնասիրողներս առանց միմեանց մոտիկից ծանաչելու, շնորհիվ այս ամսագրի ծանոթանում ենք միմեանց յոդաններին ու ուսումնասիրություններին և դրանք ներկայացնում ենք մայր Հայրենիքում հրատարակող ամսագրում, և այսպիսով մենք մեզ Հայաստանի երաժշտարեստի, այն է Երաժշտական Հայաստանի մի մասնիկն ենք համարում: Այս ամսագրի շնորհիվ է, որ ծանոթացել եմ և տկն Գոհար Շաքոյանը մի այլ յոդանագրի միջոցով: Ահա Հայրենիք-Սփիւք իրադատուկ մի կապ, որը միատրում է երաժշտությանը:

Հայաստանում եղած օրերիս հրատարակչության պատասխանատու՝ երաժշտագետ տկն. Գոհար Շաքոյանի կողմից հրապարակվող դասախոսելու, Երևանի «Կոմիտաս»ի Անան Դերական Կոնսերվատորիայում, դասախոսների, ուսանողների և հրապարակների համար, ինչն անչափ մեծ պատիւ էր ինձ համար, քանի որ աւարտելով նոյն Կոնսերվատորիան և միշտ կապ պահպանելով Կոնսերվատորիայի և սիրելի դասատուների ու դասախոսների հետ, մի տեսակ առիթ էր տարիներ յետոյ ներկայանալու և

եկեղեցական զանգակը»ն էր, որի ընթացքում պատմում էի Հայոց Առաքելական եկեղեցիներում, միայն Նոր Ջուղայում օգտագործող ծիսական նազարան «Ջանգակ»ի մասին, որը դպրոցական տարիքիս հարկանել եմ տօնական տնօրենէքի ժամանակ: Տարիների ընթացքում նիւթեր էի հաւաքագրել ու լուսանկարել, և այս ուղղութեամբ մի յոդան գրեցի, որը հրատարակեց «Արեստագիտական հանդէս»-ի 2023 թվականին, ինչը ուրախալի է անձամբ ինձ համար, քանի որ երկար տարիների հաւաքագրած նիւթերս, ծննդավայրիս՝ Նոր Ջուղայի երաժշտական մշակոյթի մի մասն էին ներկայացնում: Այս դասախոսության ընթացքում ցուցադրեցին տեսաֆիլմեր արարողությունների ընթացքից որտեղ օգտագործում է զանգակը: Յարգարժան ունկնդիրը լսեց նաև մի ձայնագրություն երկու սարկաւազների կատարմամբ: Հարկ է նշել որ վերոյիշեալ ձայնագրության և տեսաֆիլմերում հնչած երգերը բոլորը Նոր Ջուղայի աւանդական երգեցողություն էին ներկայացնում: Երգերը երգել են տարբեր առիթներով Ջանգակի օգտագործման հետ միաժամանակ, որոնք ձայնագրել ենք տարիների ընթացքում:

Միս դասախոսությունը, դա Նոր Ջուղայի Ս. Ծննդեան որմնակարների մասին էին: Այս դասախոսության ընթացքում ներկայացրեցին Նոր Ջուղայի եկեղեցիներում հնուց պահպանված Ս. Ծննդեան որմնակարները, որոնք լուսանկարել եմ տարբեր ժամանակներում: Մրանց հետ ներառել էի նաև երեք նմոյշ Ս. Մկրտության թեմայով փայտանկարչություն, և Ս. Ծննդեան թեմայով եօք գոյն մի յախճասալիկներով պատկեր, որոնք ճիշտ է որմնակար չէին, բայց Ս. Ծննդեան և Ս. Մկրտության թեմաներին էին վերաբերում, և որ, ամենակարևորն է, Նոր Ջուղայի իրադատուկ մշակութային նմուշներն են ներկայացնում: Պիտի նշել որ յատկապես յախճասալիկներով պատկերը իրադատուկ է քանի որ այն պարսկական արեստ է և հայերը սովորելով իրացրել և օգտագործել են քրիստոնէական թեմաններով և հայերէն արձանագրութեամբ: Այս դասախոսության վերջին նկարները Բրիտոսի Ս. Ծննդեան վերաբերող, պարսկական արեստի գործեր էին, որոնցից առաջինը ազգութեամբ պարսիկ նկարիչ Բեհզադի վրձինն է պատկանում և մոզերի երկրպա-

կություն էր, և Հայաստանի Կոմպոզիտորների Միութեան, «Հայ Կոմպոզիտորական Գունապնակն Արդի Աշխարհում» Գիտական Հոդվածների ժողովածու 1/2023-ի նոր հրատարակված առաջին համարը, որի մէջ ընգրկված է իմ կողմից գրված «Արդ հրամանաւն Աստուծային» երգի մասին յոդանը, ինչը ինձ համար մեծ պատիւ է, որի համար անչափ շնորհակալ եմ յարգելի տկն Շաքոյանին, որ սիրով ընդունեց յոդանը, կարդաց և ուղղումներ տուց, և բոլոր այն մասնագէտներին, որոնք ուշադրություն դարձրին այս յոդանին և ընդունեցին տպագրութեան համար: Տկն. Գ. Շաքոյանը հրապրեց Կոնսերվատորիայի գիտական գծով պրոֆեսոր տկն Մովսիսյանին (որի ուսանողը լինելու պատիւն եմ ունեցել) իր խօսքն արտայայտելու, որն իր խօսքի ընթացքում շնորհակալություն յայտնեց ծրագրի կապակցութեամբ, գնահատեց իմ աշխատանքը և քաջալերական խօսքեր հնաեցրեց ինչը ուրախալի և միևնոյն ժամանակ պարտաւորեցնող է, և ցանկութիւն յայտնեց որ միշտ կապ պահպանել, և որ ուրախ կը լինեն միշտ հանդիպել: Ծրագրի վերջում հնչեցին բաականին հարցեր ու ստացան պատասխաններ:

Անչափ գոհ և շնրհակալ եմ բոլոր ներկաներից և սրտանց շնորհակալութիւն եմ յայտնում նրանց ներկայութեան համար: Խորին երախտագրութիւնս եմ յայտնում սիրելի դասաօսներին և դասատուներին ինչպէս նաև Հայկական ժողովրդական նազարանների և Հայ ժողովրդական ստեղծագործութեան ամբիոնների վարիչներին և դասախօսական կազմին որ իրենց գիտելիքներն ու փորձը փոխանցեցին ինձ նախկին ուսանողուհիս:

Խորին շնորհակալութիւն և երախտագրութիւնս եմ յայտնում երաժշտագետ յարգելի տկն Գոհար Շաքոյանին, որ նման հնարաւորութիւն ընձեռեց ինձ և հրապրեց դասախօսելու իմ սիրելի Կոնսերվատորիայի հարկի ներքոյ, առանց որի այդպիսի կարճ ժամկետում չէր կարելի դասաւորել դասախօսությունների ծրագիրը:

Նման ծրագրերը մեզ պէտք են, քանի որ տարբեր միջավայրերում ապրող սփառքահայերս, և Հայաստանում ապրող հայերը միատրում ենք մեր մայրենի լեզու ու մայր Հայրենիքով, և քանի որ նոյն մշակոյթի կրողն ենք, և մենք սփառքահայերս, մեր ու մեր ապրած միջավայրերի փոխազդեցութիւնն ենք կրում մեր մէջ, ուստի միասին հանդիպելն ունկնդրելն ու գրուցելը նոյն լեզուով, մի այլ հոգևոր կապ է ստեղծում մեր միջև, որի հիման վրայ էլ առկա ամուր ենք կառչում մեր մշակոյթին, մեր Հայրենիքին, ինչու չէ, նաև առկա պարտաւորւած զգում ծառայելու հայ մշակոյթին և առկին անելու:

Ցանկանում եմ երկար կանաչ ճանապարհ ԵԴԿ-ի հրատարակչութեանը, զինւած միշտ ուսեալ և նվիրեալ անհատներով, ինչպիսին է ազնաւափալ տկն. Գոհար Շաքոյանը:

Յարգանքներով՝

Իրանահայ երաժիշտ ուղահար՝
Մամոջ Մրտաշյան Էստիկ-Յովհաննիսյան
Ապրիլ 2024

Ֆրանկոֆոնիայի միջազգային օրերի փակման գալա համերգը՝ նվիրված Ֆրանսիա Պուլենկի ծննդյան 125- ամյակին

1 «Արամ Խաչատրյան» համերգասրահում տեղի է ունեցել «Արամ Խաչատրյան» համերգասրահում, ապրիլի 27-ին տեղի է ունեցել Ֆրանկոֆոնիայի միջազգային օրերի փակման գալա համերգը՝ նվիրված Ֆրանսիացի մեծանուն կոմպոզիտոր Ֆրանսիս Պուլենկի ծննդյան 125- ամյակին:

Համերգին հետևել են ԿԳՄՍ նախարարի տեղակալներ Արթուր Մարտիրոսյանը, Դանիել Դանիելյանը, Հայաստանում Ֆրանսիայի արտակարգ և լիազոր Դեսպան

800 միջոցառումներով: Ֆրանսիայի դեսպանության, Կենտրոնական և Արևելյան Եվրոպայում ֆրանկոֆոն կառույցի՝ Crefecco-ի աջակցությամբ դպրոցներում զարգացում է ֆրանսերենի ուսուցումը. հանրակրթական 250 հասարակության 62000 սովորողներ սովորում են ֆրանսերեն: Հայաստանում գործող ֆրանկոֆոն բուհերի թիվը եւս աճելու միտքով ունի»:

Արթուր Մարտիրոսյանը նշել է, որ նախատեսվում է 2027 թվականին ֆրանկոֆոն խաղերն անցկացնել Հայաստանում:

գծային աշխատանքների ձևաչափով:

Համերգն իրականացվել է ՀՀ ԿԳՄՍ նախարարության, Կամերային երաժշտության ազգային կենտրոնի, ՀՀ-ում Ֆրանսիայի Հանրապետության դեսպանության և Ֆրանսիական ինստիտուտի համագործակցությամբ: Ելույթներով հանդես են եկել Հայաստանի պետական կամերային նվագախմբի ընդլայնված կազմը, Հայաստանի պետական կամերային երգչախումբը, Երևանի պետական կամերային երգչախումբը:



Հայաստանի պետական կամերային երգչախումբ, Հայաստանի պետական կամերային նվագախումբ, դիրիժոր Ֆելիպ Անդրուս, մենակարար՝ Գալինա Ցոլակյան



Հայաստանի պետական կամերային նվագախումբ, դիրիժոր Ֆելիպ Անդրուս, մենակարար՝ Ժան-Պոլ Գասպարյան

Օլիվիե Դեկոտիային, Հայաստանում Կանադայի արտակարգ և լիազոր Դեսպան Էնդրյու Թըրները, դիվանագետներ, պաշտոնատար այլ անձինք:

ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանը հանդես է եկել ողջույնի խոսքով և նշել. «Ուրախ եմ, որ Հայաստանում ֆրանկոֆոնիան ավելի մեծ տարածում է գտնում, որը փնտրում է իր սեփական ճանապարհը: Այս փարիսի ֆրանկոֆոնիայի օրերին Հայաստանում ներգրավվել են ավելի քան 320 կրթամշակութային կառույցներ՝ մոտ

տանում, ինչն ընդգծում է մեր երկրի հավատարմությունը ֆրանկոֆոնիայի արժեքներին: Նա հավելել է, որ ՀՀ կառավարությունը մեծ պատասխանատվությամբ է վերաբերվում այդ հանձնառությանը:

Արթուր Մարտիրոսյանը նաև շնորհավորել է Քաղաքացու օրվա առիթով և նշել, որ օրվա շրջանակում հանրապետությունում լայնամասշտաբ միջոցառումներ են իրականացվել, որոնք ընթացել են բանախոսությունների, մշակութային ծրագրերի, դպրոցականների շրջանում նախա-

դիրիժոր՝ Ֆելիպ Անդրուս (Գերմանիա), Մենակատար՝ Ժան-Պոլ Գասպարյան, դաշնամուր (Ֆրանսիա), սոպրանո՝ Գալինա Ցոլակյան:

Ծրագրում հնչել են Ֆրանսիա Պուլենկի «Stabat Mater»-ը, «FP 148»-ը, դաշնամուրի Կոնցերտը:

ՆԱԽԲԱՆ ՄԱՅԻՍԻՆ
<https://hy.armradio.am/archives/568118>

«Ամեն մեկս կոչված ենք Հայրենիքի մի կյտր պահելու». ազգային երաժշտական հյուսածոն «Տաղարան»-ից

1 Հնագույն երաժշտության «Տաղարան» անսամբլի՝ 2024-ի մայիսյան համերգին հնչեց Սեդրակ Երկանյանի հեղինակած «Հայկական խճանկար» բազմաձև ստեղծագործության երրորդ մասը:

Հայոց հնագույն երաժշտարվեստի հարուստ գանձանակից առնված երգերն ու նվագները, անցնելով ժամանակակից հայ կոմպոզիտորական արվեստի «քուրայով», նոր երանգավառ, հնչյուն նորահայտ մեկնություն, գործիքավորման հայտնությունների գեղեցկությունն են կրում՝ դառնալով արդի ստեղծագործողների հեղինակային մտահղացումների և երաժշտական կերպավորումների նյութը: Սեդրակ Երկանյանի «Հայկական խճանկար»-ի ձյուղերն էլ ակնհայտորեն հեղինակի ձեռագրահյուսքերն են՝ իրենց կառուցվածքների առանձնահատկություններով, գործիքավորման գունախաղերի յուրատիպությամբ, հնագույն ատաղձ հանդիսացող երգերի և նվագների ոչ միայն գեղեցկությունը, այլ նաև հայկականությունը ներկայացնելու հնարավորությունը:

Որքան պրակներ կան մշակելու, որչափ հարուստ և անսպառ է անհիշելի ժամանակներից մեզ հասած նյութը՝ քանիցս իր հիացումն է արտահայտել մասետրո Ս. Երկանյանը՝ շարունակաբար անդադառնալով բանահավաքական հարստությանը: Նախորդ մի քանի տասնամյակներին իր արարումներին՝ հարսանեկան երգերի շարքերին, անգուգական հորովելներին, ասքապատումին, հարյուրավոր մշակումներին գումարվել են «Հայկական խճանկար» ընդհանուր խորագրով շարանները, յուրաքանչյուրը՝ մի-մի ձեռագրահյուսք՝ կազմված երգերի, պարերի, նվագների, մեղեդիների համադրություններով: Այս շարքերից ամեն մեկը կառուցված է այնպես, որ իր պարունակած յուրաքանչյուր երգ ու եղանակ մեկը մյուսի օրգանական շարունակությունն է դառնում: «Նարե» և «Հայ, ջան», «Լուսնյակն էլավ» և «Դե՛, քելե՛, քելե՛», «Կրկնակի գլովնը» և «Նաներ, Նաներ», «Ղարաբաղի կոխի եղանակ» և «Լե, լե թամբարա», «Ձի խաղացնելու եղանակ» և «Սահարի», «Շատախցի Բարսեղ» և «Թիլլարա», «Ձիգ պար» և «Էրգրումի պար» և էլի երգեր ու պարերանակներ, բոլորը հեղինակային մտահղացմամբ միահյուս, սահուն անցումներով, ազգային նվագարանների հունքը լիարժեք



«Տաղարան» անսամբլ, ղեկավար Սեդրակ Երկանյան

քորեն ներկայացնելու հնարավորությամբ:

«Հայկական խճանկար»-ների բոլոր շարանները մտովի շրջագայություններ են հայրենի բնավայրերով, երաժշտության միջնորդությամբ և երևակայության գործությամբ այցել հայոց պատմական գավառներ, հայրենի բնության ձայների ունկնդրում, հայ գեղջուկի նիստուկացին ներկայություն, հողագործի երգի, սիրահար սրտերի պարզ ու սրտառու խոստովանությունների, կարոտի ու խոստման ունկնդրում, - և այս ամենը՝ բուն հայկական հնչողությամբ:

Ես ինձ թույլ եմ տալիս երգերի ու նվագների այս միահյուս - իրարով ներդաշնակված երաժշտական երկը համեմատել հայկական հնագույն գորգերի գործվածքի հետ, որոնցում գույների համադրությունը՝ վառ, ընդգծված, իդեալական է, պատկերներ - խորհրդանշները կյանքի, արարման, հավերժության մասին են: Ու երբ գնում ես գործքը, թե՛ երեսին և թե՛ դարձերեսին ոչ մի թերություն, ոչ մի ավելորդ հյուսվածք, ոչ մի շեղում՝ մտահղացումից, ոչ մի դուրս պրծած թել կամ քարկապ չկա. ահա այդ նույն անթերի գործքով կառուցված են Ս. Երկանյանի «Հայկական խճանկարի» բոլոր դրվագները:

Երրորդ մասում էլ գունեղ, արտահայտիչ էին «Տաղարանի» մեներգիչներ Լուսինե Մարկոսյանի, Գալինա Ցոլակյանի, Գայանե Ղամբարյանի, Հովսեփ Նշանյանի և Արամ

Մամիկոնյանի հնչեցրած սիրո, աշխատանքային երգերը, մեկը՝ խոստմամբ ու հասուն զգացմունքով, մյուսը՝ զուլայ, պատանեկան նորածիլ զրգիքներով, երրորդը՝ սպասմամբ ու կարոտակեղ կանչերով... Երգերը համադրված էին հայոց մշակույթի գանձանակից առնված նվագներով, պարերանակներով, բնության ձայներ - մեղեդիներով, որոնք կատարեցին անսամբլի մենակատարներ՝ բլուրահար Հասմիկ Մուրադյան-Հարությունյանը, ուղահար Լուսինե Դավոյանը, դուդուկահար Արտակ Ասատրյանը, սանթուրահար Քրիստինե Մնացականյանը, քանոնահար Մարիաննա Գևորգյանը, թավջութակահար Թեյմուր Խաբիրին:

«Ամեն մեկս կոչված ենք Հայրենիքի մի կյտր պահելու», - իր «Հայկական խճանկար»-ները ներկայացնելիս ասել է Ս. Երկանյանը: Մասետրոն դա անում է իր ստեղծագործությամբ՝ հայ հնագույն երաժշտական մշակույթի գանձերը փրկելով մոռացությունից և ներկայացնելով հեղինակային անկրկնելի ձեռագրով, բարձր գաղափարա-նությամբ, Հայաստանին ծառայելու անսակարկելի տեսլականով:

ՀԱՍՄԻԿ ՍԱՐԳՍՅԱՆ
<https://azg.am/culture/%d5%a1%d5%b4%d5%a5%d5%b6-%d5%b4%d5%a5%d5%af%d5%bd-%d5%af%d5%b8%d5%b9%d5>

= «ԶԱԶԻ ԱԶՆՎԱԿԱՆ» ԳԱՐԻ ՔՅՈՍԱՅԱՆԻ ԽՈՐԱԽՈՐՀՈՒՐԴ ԵՎ ՈԳԵՂԵՆ ԱՇԽԱՐՀԸ

**Նրա զենքը երաժշտությունն է,
որով աշխարհին պատմում է հայի
մասին:**

«Հայն ունի ինքնուրույն երաժշտություն... Յուրաքանչյուր ազգի երաժշտությունն իր հնչական ելեէջներն կ'ունի ու կ'ափայլի: Հայ լեզուն ունի իր հատուկ հնարավորությունը, ուրեմն և համապարասպիան երաժշտությունը», – Կոմիտաս Վարդապետն է խոսում: Այստեղ դարերի ճշմարտությունն է: Եվ ինչպիսի երաժշտություն էլ ստեղծի հայ արվեստագետը, ինչ երաժշտության լեզվով էլ խոսի, միևնույն է, այն կրելու է Հայի հազարամյակներից հաճնող քաղաքակրթության կնիքը, երբ մեր առջև ու աշխարհի բեմերում մենք երաժիշտ է: Նա Արարածից աշխարհին նայող հայացքն է, որ իր արվեստի լեզվով պատմումս է հայի մարա-
նունների ու արարումների մասին: Իսկ երբ վեր են հանում ազգային մենք հարցերը, համախմբում է աշխարհի մշակույթի հսկաներին, որ լինեն ի՞ր ազգի՝ Հայի բաժին արդարու-
թյան ջահակիրն ու ճշմարտության դեսպանները...Անվանի դաշնակահար, կոմպոզիտոր, ջազմեն Գաբի Բյուսայանն է այդ արվեստագետը:

Գարի Բյոսայանի ստեղծագործությունների հնչյունները հնարավոր էլ շփոթել մեկ այլ արվեստագետի աշխարհի հետ: Նա ջազային աշխարհում մեծ անուններից է, ում ստեղծագործությունները հնչել են հասնաշխարհային ջազի դասական նմուշների կողքին: Մասնաորոն գրել է շուրջ 100-ից ավելի ջազային ստեղծագործություններ և երաժշտություն ֆիլմերի ու ներկայացումների համար:

Մեր ազգի նշակությունն ու քաղաքակրթական անցյալի առաջ խոնարհ, բայց ջազի նման ըմբոստ ու մարտնչող երաժշտություն ստեղծող Մանետորյի հարուստ կենսագրությունը հնարավոր չէ ամփոփել մի փոքրիկ հոդվածի շրջանակում: Բայց միայն մի փաստ կառանձնացնենք, որը բնորոշում է արվեստագետին. 1988-ից ի վեր շուրջ 15 տարի ջազի հայրենիքում ապրած ու ստեղծագործած արվեստագետը միշտ եղել է իր ազգի կողքին, ապրել Հայաստանով, մասնակցել մեր ազգային կյանքի նշանակալի իրադարձություններին: Դրա վկայություններից մեկը Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի առթիվ Մանետորյի նախաձեռնած «Ջազն ընդդեմ ցեղասպանության» ծրագիրն էր, որով աշխարհին հասցրեց մեր ազգի պատմական արդարության ծայլը:

Այսօր էլ Մանեստրոն շարունակում է արարել և արվեստասերներին ընծայել նոր ստեղծագործություններ, որոնք ոգեղեն ուժ են տալիս հային՝ շարունակելու իր ընթացքը այս մարտահրավերներով յի ժամանակներում:

...Ապրիլի 30-ը աշխարհում նշվում է որպես Ջագի միջազգային օր: Մանետրո Գարի Բյոսայանը և Ջագ Քառյակը հանդես եկան յուրահատուկ համերգային ծրագրով, որն այս անգամ ևս առանձնացավ իր ասելիքով, խոհափիլիսոփայական շեշտադրումներով: Բնմուն արարման ծես էր, որտեղ ամեն մի հնչյունը, ամեն մատուցվող ստեղծագործությունն իր խորհուրդն ուներ...

– «Ջազային երաժշտի համար շատ կարևոր է պահպանել հիշողությունն անցյալի մասին: Երգի մասին, որ երգել են ծերունիները բակում լուսնյակ գիշերով, կամ այն մասին, թե փաղեղի ժամանակներում ով ինչ է ասել», – այս խոսքերը պատկանում են ջազի հսկայներից Դյուլս Էյնգթոնին:

Եվ Մանեստրոն Գաբի Քյոսայանի երաժշտությունն ազգի անցյալի մասին հենց այդ հիշեցումն են, որ հազարամյակների խորքից գալիս է մի ժողովուրդ, որի հնամյա երկիրը պատմական սկզբնաղբյուրներում հիշատակվում է որպես «Սրբազան օրենքների երկիր»:

Համերգային երեկոն բացվեց Գարի Թոսայանի «Կիրակնօրյա բլյուզ» (*Sunday Blues*) ստեղծագործությանը, որպես առաջին ակորդ:

Որքան էլ դժվարին է եղել մեր ճանապարհը, միևնույն է, հայ արվեստագետը ամենաձանր պահերին անգամ հավատացել է իր ազգի վերածննդին: Թերթթ մշակույթի պատմությունը: Մեկ անգամ ևս կարդացեք, օրինակ, Ամենայն Հայոց Բանաստեղծ Հովհաննես Թումանյանին, որ Հայոց ցեղասպանության ծանր օրերին գրում էր իր ոգեկոչյալն և միաժամանակ ապրեցնող բանաստեղծությունները.

Բայց հին ու նոր թո վերքերով կանգնած եւ դու կենդանի,
Կանգնած խոհուն, խորհրդավոր ճամփին նորի ու հրնի.
Հառաչանքով սրբորի խորքից խոսք եւ խոստում Ասքծու հեղ
Ու խորհում եւ խորին խորհուրդ փանջաւթներում

Ճարտաղեկ,
Խորհում եւ դու էն մեծ խոսքը, որ պիտի ասես աշխարհքին
Ու պիտի դառնաս էն երկիրը, ուր ձրգպում է մեր հողին,
Հույսի՝ հայրենիք,
Լոյսի՝ հայրենիք:

Ծանոթ տողեր են, չէ՞: Որքան մեծ պիտի լինի արվես-

տապեալոր, որ անգամ դժբախտության մեջ շարունակի տեսնել իր ազգի մեծությունը ու հավատա նրա քաղաքակրթության Լույսի հաղթանակին: Այսպես և Մանստրո Գարի Քյոսայանը լինելով մեր ազգի մեծ նախնիների Ոգուկրողը՝ գրում է երաժշտություն, որը հենց այդ Լույսի խորհուրդն ունի: Եվ վերջերս գրված ստեղծագործությունը հենց այդպես էլ կոչվում է՝ «Լույս» («Luys»): Եվ այն հնչեց «Գեղարար» երգչեկի երգչախմբի (գեղ. դէկ.) Միեր Նավոյան, խմբավար՝ Մնահիտ Գլապայան) կատարմամբ՝ հարևանման միջնադարյան շարականներից ծնունդ առած աղոթքի՝ ուղղված առ Աստված:

Եվ ասես մի ներքին երկվիտությունը ու տրամաբանական կոռ կապով հնչում է Մաեստրոյի հաջորդ ստեղծագործությունը՝ «*Milky Way*» («Ծիր Կաթին»), որով «Ձագի ազնվականը», ինչպես Մաեստրոյին կոչում են մշակույթի աշխարհում, պատմում է հազարամյակներ առաջ աստղերի ու Տիեզերքի հետ գրոյց արած, դիցաբանական անցյալ ունեցող իր ժողովրդի մասին, ով պատմությանն ու ժամանակների մարտահավերժերին պարտվելու իրավունք չունի պարզապես։ Սա երաժշտություն է, որը հայ մարդուն մշտապես ստիպելու է դուրեցի իր Կենսաց ծափի արմատներին հետ ու նոտով թռչել դեպի հազարամյակներ և իր մեջ արթնացնել վիշապաբաղ Կահագնի ոգին ու շարունակել մաքառումներով յի իր ուղին պատմության թատերաբե-



Այլա Սահակյան



Լրուհնէ Փայլոն

បំណង:

Հաջորդ ստեղծագործությունը, որ կոչվում է *«Blues for Maria»* («Բլյուզ Մարիայի համար») պատմում է Մանստրոյի կյանքի երջանիկ դրվագի՝ նրա դստեր Մարիայի աշխարհ գալու մասին: Եվ սա գեղեցիկ ստեղծագործություն է, որը մարմնավորում է Ընտանիքի գաղափարը՝ որպես ազգային արժեք: Իսկ այս երգի հրաշալի կատարողը Մանստրո Գրայի Քյուսայանի ստեղծագործական կյանքի ուղեկից, հմայիչ դերասանուհի է երգչուհի Ալյա Սահակյանն էր:

ԱՄՆ-ից ժամանած հատուկ հյուրն էր վիրտուոզ ջութակահարուհի Լուսինե Ֆայլոնը, ում շնորհիվ Մանեստրոյի ստեղծագործություններն ուղեկցվում էին ջութակի ինքնատիպ ինպրովի լիցաքաններով: Եվ այս ամբողջը մարմին ու ոգի էր ստանում Զազ Քառյակի արվեստագետների շնորհիվ, որոնց անունները չենք կարող մեկ առ մեկ չթողարկել: Մտրեն Զաքարյան (բաս), Գևորգ Հարությունյան (հարվածային) և, իհարկե, Մանեստրո Գարի Քոստայան (ղաշնամուր):

Գարի Քյոսայան–արվեստագետը նաև նկարիչ է, ում ստեղծագործությունների հնչյունները վերածվում են «վտավների»՝ «*Apricot tree*» («Ծիրանի ծառ»), («*Angel dance*») «Հրեշտակների պար»...Եվ երբ իր հեղինակային գործերի կողքին հնչում են նաև համաշխարհային մյուս մեծերի, ջազի դասականների գործերը, ստեղծվում է քաղաքակրթությունների յուրօրինակ երկխոսություն՝ Միշել Լեգրան, Դեսմոնդ...Եվ այս ամբողջ գունապնակը մեզ էին մատուցում Գարի Քյոսայանը և Ջազ Քառյակը, երգչուհի Ալլա Մահալյանը (Վոկալ) և վիրտուոզ ջութակահարուհի Լուսինե Ֆայլոնը:

...Երկրորդ բաժինը բացվեց Մանեստրոյի «Attitude» («Վերաբերմունք») ստեղծագործությամբ: Գարի Բյոսայանի ստեղծագործությունները շատ հռչակավոր երաժիշտներ են մեկնաբանել, հնչել են տարբեր գործիքների նվագակցությամբ և ինսյուվիզացիաներով: Դրանցից է՝ աշխարհի բազմաթիվ բեմերում և բազմաթիվ մեծանուն երաժիշտների կատարմամբ հնչած «Silence» («Լռություն»), որն ունկնդրելիս ակամա հայտնվում են խորախորհուրդ աշխարհում մտադրում են իայ գրականության մեր մեծերից Ավետիք Իսահակյանի արձակ բանաստեղծությունը.

«Օերունի մի դերսի՞՜, ճակատն արևառ, եկալ եզիպրա-
կան անապարդ, որ ամօ Աֆինքսից հարցումներ աներ՝ եր-
ջանկության խորհուրդը իմանալու համար:

Անապատի դեղին լռության մեջ բազմել էր հինավուրց Մֆինքսը՝ անդորր ու աներեր. նրա անթաթթ աչքերը ժամանակի խորքերից նայում էին խորհրդավոր հեռուներ...»:

Սա իր ասպիկիով համամարդկային ստեղագործություններից մեկն է, որը ոչ միայն մեզ, այլև բոլոր ազգերին մշտապես խորհելու ամիթ է տալիս XX դարից նայել մարդկության անցյալի հեռուներին, անցյալի քաղաքակրթություններին ու հաշիվ տալ, թե աշխարհի խելածեղ ընթացքի մեջ ի՞նչ հանգրվանն է պիտի ձգտի Աստուծո պատկերով ստեղծված մարդը, որ հոգևոր անապատում չկորցնի սեփական դեմքը: Սա արվեստագետի լուռ գրույցն է մարդկության անցյալի ու զալիի՝ դերևս անհայտ հեռուների հետ, ինչպես հազարամյակների խորքից մեզ նայող Մֆինքսը: Եվ այս անգամ ստեղծագործությունը մեկ այլ մեկնաբանություն է ստանում Լուսինե Ֆայլունի ջութակի նվագակցությամբ:

Շատ կարևոր խորհուրդ ու շեշտադրում ունեին հռչակավոր Միշել Լեգրանի՝ «*Windmills of your mind*» («Քո մտքի հողմադաշները») ու Շառլ Ագնավորի՝ «*La Baracca*» («Լա բառակա») ստեղծագործությունների կատարումները: Եվ Մեծն Ագնավորի երգը ոչ թե կատարեց, այլ, կարելի է ասել, կերպավորեց Ալլա Սահակյանը՝ յուրօրինակ մեկնաբանությամբ ու մի փոքր էլ «ազնավուրյան խնթություն» դնելով...

Հայր մարդկության քաղաքակրթության հիմնաքարերը դրանք ազգերից է, որի ակունքներում այն արժեքներն են, որոնք հետո պիտի մարդկությանը փոխանցվեին քրիստոնեության միջոցով: Պատահական չէ, որ Մանստրոյ ստեղծագործական ժառանգության մեջ բազմաթիվ են Աստվածաշնչյան թեմաներից ներշնչված գործերը ու դրանով իսկ նա ամրոցացնում է մեր իսկ հնամենի քաղաքակրթության ժառանգականության շղթան: «Reverence» («Ժողնարհում») ստեղծագործությունը հենց այդ ոգեղենության մարմնավորումն է, որով արվեստագետն իր խոնարհումն է բերում Աստծուն և մեր մեն խախնե՞նք: Գաբի Բյուայան- կոմպոզիտորն ու արվեստագետը հավատում է մշտապես մահվան վտանգը հաղթահարած իր ազգի վերածննդին: Հավատում է, որ հավերժ է լինելու Հայաստան անունը, որի անունը հիշատակվում է դեռևս 3500 տարի առաջ շումերական կավե-սալի արձանագրությունում: Եվ Մեստրոյի «Armenia» («Հայաստան») ստեղծագործությունը այս մասին է, որը դարձել է նաև անցյալ տարի նրա թողարկած նոր ձայնակավառակի խորագիրը:

Երեկոյի վերջին ակորդները դարձան «Breeze» («Զևիչույո») և «Eddie» («Էդի») ստեղծագործությունները: «Breeze» («Զևիչույո») և «Reverence» (Վոնարիում) ստեղծագործությունները ևս հնչում էին առաջին անգամ...Իսկ ջերմ ունկնդրի խնդրանքով «Eddie»-ն հնչեց ևս մեկ անգամ:

Հանդիսատեսը հեռացավ՝ իր հետ տանելով Մանստրոյի արվեստի յույսը, որը ևս մի բանալի պիտի դառնա մեր անցնելիք ճանապարհներին հայի իրական տեսակը մեր մեջ վերահաստատելու համար:

Նշենք, որ համերգի աջակիցներն էին «Կաֆֆա» ընկերությունը, «Վիլլա Կլեմենթ» հյուրանոցը, «Սիլվա ռոուդ» հյուրանոցը, «Լեվոն Ռթավել» ընկերությունը: Ինֆորմացիոն հովանավորն էր «Նյու մեգ» հրատարակչությունը, իսկ գլխավոր հովանավորը՝ «Գեղարքունային» գոլդ. ընկերությունը, որը միշտ եղել է Մանատրոյի համերգների կողքին:

«Մի մեծ երազանք ունեմ, որ ամեն հայ հասկանաւ, թէ ինքն ով է, որպէղ է սպարում՝ որպէս առաջին քրիստոնյա ժողովուրդ» :

...Մանստորո Գարի Քոսայանի հետ զրուցել էի դեռ համերգային երեկոյի նախօրեին: Միրով ներկայացնում եմ նաև արվեստագետի խոհերը մեր ազգային կյանքին և մշակույթին վերաբերող հարցերի շուրջ:

– Հարգելի Մանսուրո, ապրիլի 30-ը Ջազի միջազգային օրն է: Եվ Դուք հանդես եք գալու գեղեցիկ համերգային ծրագրով և հնչելու են նոր ստեղծագործություններ: Մեր խնդրանքով կարո՞ղ եք փոքր – ինչ ներկայացնել, թե ինչ-պիսի ստեղծագործություններ եք ընդգրկել, որոնք նաև նոր խոսք են և ուղերձ են լինելու իրենց գաղափարակաան ասելիքով:

– Մնացին հերթին ունենք երգի և սրերղծագործությունների պրեմիերա: Մեզ հետք միասին ելույթ կունենա «Գեղարար» երգեցիկ խումբը, որի հետ համագործակցում ենք առաջին անգամ, կապարարելու է իմ «Մոյա» սրերղծագործությունը, որը գրել են վերջերք: Մնացին անգամ հնչելու է երկու նոր սրերղծագործություն, որոնք նոր են գրել: Մեկը կոչվում է «Breeze» («Զևիկյուն»), մյուսը՝ «Reverence» («Խոնարհում»): Մեզ հետ ելույթ կունենա շարի հայպին ջութակախմբի Լուսինե Ֆայրդել՝ՄՄԻ-ից՝ զարմանալի պաղանդի արեր, վիրաբույժ կապարող, ծագող սալար: Կկապարենք իմ հեղինակային գործերը, ինչպիսիք են «Bluses for Maria» («Բլյուզ Մարիայի համար»), «Angel Dance» («Հրեշքակների պայր»), «Silence» («Ընդդիմություն») և աման գործեր: Սրերղծագործությունները հնչելու են ջութակի ինպրոպիզացիոն նվագակցությալ: Մնացին անգամ սյղ գործերը կհնչեն ջութակի նվագակցությալ:

- Ինչպե՞ս կազմվեց ծրագիրը, որով այս հա-

= «ԶԱԶԻ ԱԶՆՎԱԿԱՆ» ԳԱՐԻ ՔՅՈՍԱՅԱՆԻ ԽՈՐԱԽՈՐՀՈՒՐԴ ԵՎ ՈԳԵՂԵՆ ԱՇԽԱՐՀԸ

մերժը ևս առանձնանալու է իր շնչով ու ձեռագրով:

6 - Զագի միջազգային օրը բոլոր ջագի սիրահարների և ջագ երաժիշկների համար մեծ փուն է: Դա համաշխարհային արվեստի այնպիսի մի լեզու է, որով ամբողջ աշխարհը գրավելի 20-րդ դարում ու շարունակում է գրավել: Զագի անբացադրելի գաղութներինք մեկն այն է, որ արելոծում է հոգու հավասարակշռություն, և մարդկի նարած լսելուց վայելում են ջագ երաժշտություն: Կա նաև ջագ երաժշտության այնպիսի դրսևորում, որ երաժիշկները նվագում են միայն ջագ երաժիշկների համար, չեն նվագում մեծ մասսաների համար: Մյսինքն, նվագում են երաժշտություն, որն անհասկանալի է հասարակ ունկնդրի համար: Ինձ թվում է, դա մեծ սխալ է, որովհետք նանն էքսպերիմենտներով մարդկանց վանում են ջագից, փոխանակ ջոյց փան նրա հեքթաթային, հզոր էներգետիկան:

Ջազային արվեստագործությունները սերվել են հոգևոր երաժշտությունից, ծնվել են հոգևոր հիմունքների վրա: Եվ այն հարմունիկ սիստեմաները և ուղղությունը, որ այսօր կան Միացյալ Նահանգներում և կոչվում է «սափիրայալ ջազ», գալիս է հենց հոգևոր երաժշտության ակունքներից: Ջազային երաժշտության հարմունիկ սիստեմաները, և ինչ խոսք, այդ երաժշտության ամբողջ գեղեցկությունը, րեքսերը, Գեղեցիկի, Բարության, Հրաշքի աշխարհը և մարդուն սիրելի մասին են: Որպես օրինակ կարող եմ բերել Լուի Արմսթրոնգի «What A Wonderful World» երգը, որի գաղափարը սա է: «այս ինչ ջնաղ երկրագնդում եմ ապրում, երեխաները ժպտում են, ծաղիկները ծաղկում են...Փառք ցանք Աստծուն, որ այս երկրագնդի վրա ծնվել ենք, պահենք, պահպանենք այս գեղեցկությունները...»: Մյսիսըն, սրանք հոգևոր արժեքներ են իրենց մեջ պարունակում, որոնք բնության, մարդու հանդեպ սիրո և հարգանքի մասին են... Մարդի ինչպես էլ հանդիսանա բնության գազաթանակները՝ Աստղի կողմից արվածված, միևնույն է, կարիք ունի իր հանդեպ մարդկային վերաբերմունքի: Մարդն ինքն էլ պիտի այդ բոլոր արժեքներին վերաբերվի այնպես, ինչպես կուզենա, որ իրեն վերաբերվեն: Մյսնք հոգևոր արժեքներ են, որոնց մասին մեծագույն ջազ երաժիշտները գրեցին իրենց համամարդկային արվեստագործությունները: Մեծագույն երաժիշտների ջազը բերեցին համաշխարհային բեմեր՝ Էլլա Ֆիցջերալդ, Օսկար Պիտերսոն, Դյուկ Էլինգթոն, Մայս Ղևիս և այլք: Մեծամար կարող եմ թվել ջազի հսկաներին, որոնց արվածած երաժշտության մեջ մի այնպիսի հզոր էներգիա, այնպիսի փյփխություններ կա, որ ասես զրվել է հենց այսօրվա աշխարհի և իրականության մասին: Դրանցում մի ուրիշ՝ րեանկի ուժ կա...

- Մարդուն դեպի վեր տանող ուժ...
- Իհարկե: Մարդուն մարդ կոչելու մասին է այդ երաժշ-

տությունը, նրա ասելիքը...

- Հարգելի Մանսուրո, Ձեր հարցազրույցներում Դուք նշել եք . «Քմ աղեղնազործության արմատները գալիս են մեր միջնադարյան երաժշտությունից: Մակար Եկնայանի աղեղնազործություններում ներկա են մեր հոգևոր ակուրները, շա՛ր մեծ կապ կա, շա՛ր-շա՛ր մեծ կապ կա՝ հոգևոր մրաձեղակերպի, լադային մրաձեղակերպի, հարմունիկ մրաձեղակերպի առումով»: Ինչպիսի՞ն պիտի լինի հայ արվեստագետի անցնելիք ծանալարահիք, որ հասնի այն գալթաթին, որպեսզի կարողանա արվեստում լինել և նորարար, և մնալ ազգային ու առանձնապես աշխարհի արվեստագետ:

տագնաների մեծ ընտանիքում:

- Միայն մի բանաձև կա. ինչպես մեր Տերն սասց՝ «Ես չեմ եկել քանդելու հինը: Ես եկել եմ հին վրա նորը կառուցեմ»: Միայն այդ սկզբունքով: Եթե մենք չունենք դասական հիմքեր, հնարավոր չի լինի արեղծագործել, թողնել մնալուն արժեքներ: Եթե հիմք չունես, չես կարող արեղծագործել: Իսկ մենք հայ հոգևոր երաժշտության վիթխարի ժառանգություն ունենք: Մի կարևոր մեջբերում եմ ուզում անել. այդ երգը, որ պիպիի այս համերգին ստացին անգամ հնչի, կոչվում է «ԼՈՒՅԱ»: Այնպիսի խոսքեր են.

Տեր, մեզ փութ այդ Լույսը,
Որ փռանենք գանձերը մեր սազգի...

Կոմիտաս, Եկնայան, Խաչատրյան... Սյա բոլոր արժեքները մեր ազգի մշակույթն է, մեր գանձերն են... Սյապիսի գանձեր էլ կան, որ քերթ գիտեն դրա մասին: Ժողովուրդը պիտի իմանա, թե ինչ է կարարվում իր ազգի, արվեստի պարունության հետ... Մեր արժեքները մթոթյան մեջ են պահվում մի քանի պարճառներով... Նթե մեր պարունթթուներ՝ մթոթյան, կասկածի տակ է դրվում... Պարկերացնուն՝ երբ՝ ինչի մասին է խտրը... Մեր ժառանգութթյունն են ուզում ճնջել:

– Ի հեճուկս աշխարհի այդ մարտահրավերների՝ պետք է շարունակենք գոյատևել և ապացուցել, որ մենք մարդկային քաղաքակրթության Լույսի կրող ազգն ենք: Ո՞րն եր համարում այդ ճանապարհը, հարգելի Մատեոռո: Արդյո՞ք հենց մեր այդ հարուստ քաղաքակրթական անցյալը չէ, որ պիտի վերածննի ազգը:

– Բհարկել։ Այն, ինչ որ հայ ազգն է վրվել աշխարհին՝ փլի-
խտափայության գանձարանին, արվեստի գանձարանին,
երաժշտության գանձարանին, ոչ մի ազգ չի վրվել աշխար-
հում։ Ես նկարի ունեմ՝ X դար՝ Գրիգոր Նարեկացի, նկարա-
ր ունեմ՝ XX դար՝ Ազնավուր, Խաչատրյան... Նկարի ունեմ՝
19-րդ դար՝ Սյավազյան... մեր շար-շար մեծերին... Վիլիամ
Սարգսյան, Միշել Լեգրան... նրանք զիգանյուններ են աշխար-
հի։ Լինելով փոքրաթիվ ազգ՝ այսքան մշակութային մեծու-
թյուններ ենք վրվել աշխարհին։ Միայն ընդդրյալ ազգը կա-
րող էր այդքան մեծ երևոյթներ ծնել։ Եթե համեմատվեք
մեր մյուս ազգերի հետ, քանակության տեսակետից ե ընդ-
հանրապես... Ազգեր կան, որ իրենց գոյության ամբողջ ըն-
թացքում աշխատին ոչ մի երաժիշտ չեն վրվել, ճարտարա-
պետ չեն վրվել, ոչ մի պոետ չեն վրվել, ոչ մի նկարիչ չեն
վրվել... Մինչև հիմա էլ չեն վրվել... Կարծում եմ գիտեք, նման
ազգեր կան... Որպես վկայություն՝ մեր երկու ցեղասպան
հարկան ազգերում... Մինչև հիմա էլ շարունակում են իրենց
ձեռագիրը։ Բայց դա իրենց չի հաջողվելու...

- Ձեր ստորերից ևս մեկն եմ ուզում հիշատակել. «Ջազն իմադրվիլի է չափի մեջ: Սիրում է լավ նթնոլորտ ստեղծել: Ջազն ինձ համար ապրելակերպ է, որի մեջ ամեն ինչ մտնում է ազատությանն է՝ սեր, հավատ... Եթե չսիրես, չես կարող ջազ նվագել»: Վերջին տարիներին մեր երկրի համար ծանրագույն ժամանակներ են: Ինչպե՞ս եք կարողանում ստեղծել մեր ակունքներից եկող այն ոգեղեն երաժշտությունը, որը պիտի ազգն ապրեցնի ու հիշեցնի, թե ով եղել ինքը պշխարհի քաղաքակրթության պատմության մեջ: Կկիսվե՞ք Ձեր ստորումներով:

– Պիսիկի արարենք, արարենք ու անվերջ արարենք...Եվ այս համերգի ժամանակ ներկայացվելիք արեղծագործու-

թյունը, որ կոչվում է «ԼՈՒՅՍ», ևս մի քանի տող կուգենայի հիշատակել այս տեքստից.

Թող հավերժ կորչի սև ողբը
Մեր ազգի մեր երգերից,
Թող հնչեն հզոր զանգերը
Հաղթանակներ մեզ բերող:

Տեղ, մեզ փութ այն ուժը որ,
Կերպենք նոր երգը մեր ազգի
Երգը հանձարի, երգն ընտրյալի
Երգը առ Աստված, Ամէն:

Մա շար կարևոր է: Վերջին 40-50 տարիների ընթացքում մեզ արիպում են ողբ լսել: Գիտեք, ունեցել ենք հրաշալի դուդուկահար Լևոն Մարոյան, ով նվագում էր մեր ազգային պարերանմանները: Բաց կա նաև դուդուկի վաղ մատուցումը, որ կատարել են միայն գեղեզնանապաներում: Եվ ահա այս երկրորդ դրսևորումը պարտադրեցին մեզ՝ որպես դուդուկի երաժշտություն: Կարծում եմ՝ դա էլ էր ծրագրված՝ մեզ ողբ պարտադրելը: Դա մեծ մտքը է ազգի մանկության հանդես: Իսկ նման սխալները պետք է ուղղեն:

Հարկավոր է դա շրկել, որ մեր մշակույթի իրական
դրսևորումներով առաջնորդվենք դեպի վերածնունդ...

- Երբ մենք թերթում ենք մշակույթի պատմության էջերը, տեսնում ենք, որ XX դարի մեր մեծերը՝ անգամ Ցեղասպանության տարիներին իրար գրած նամակներում, մամուլում քննարկել են մշակույթը, թատրոնները՝ զարգացնելու ծրագրեր... Կարո՞ղ ենք ասել, որ սպասվող համերգը, Ձեր գրած նոր ստեղծագործությունները, որոնք հնչելու են, ևս մի վկայություն են, որ ազգը ոչնչացման վտանգին պետք է դիմակայի միայն իր մշակույթով:

- Մյու: Գիտերք ինչ, գիտակից, զարգացած ազգին հնա-
րավոր չէ հաղթել: Եվ դրա ապացույցներից մեկն էլ ամբողջ
համաշխարհային պարամոթյունն է: Մյն պետությունները,
որ ունեցել են բարձրագույն արվեստ, ունեցել են մեծագույն
իմպերիաներ. վերցնենք Հռոմը, որ Հին Հունաստանից
վերցրեցին այդ ամբողջ արվեստը ու դարձրեցին ապրե-
լիսան: Հռոմում մինչ օրս էլ այդ ասրելիաձևով են գոյապրում:
Երբ մրնտում ես Հռոմ, շուրջօրյորն արվեստ է:

Առանց արվեստի հնարավոր չէ, որ ազգը զարգանա:
... Առանց արվեստի ազգը գոյատևել չի կարող. սա պատմականորեն հաստատված ճշմարտություն է մեզ՝ հայերիս համար: Ու մենք հետևորդներն ենք այն ժողովրդի, որ թշնամիների արշավանքների ժամանակ ոսկու և արծաթի փոխարեն փրկում էր իր ձեռագիր մատյանները, որտեղ մտել հոգևոր գեներն էին՝ Պատմությունն ու Մշակույթը: Եվ Ամենատրո Գրիկ Բյուսայանի համար ազգի գոյատևման բանաձևերից մեկն էլ սա է, որով գրեթե միշտ ավարտում է իր գրույցները.

- Մի սեռ երկուսն էլ ունենալ, որ մենք չենք չսկսում, թե հենց ով է, որ հետո է մարդու՝ որդես մոռանալ թույլ-
Տունը մոռանալ...

**Պարրասարեց՝ ՀԱՍՄԻԿ ՊՈՂՈՍՅԱՆԸ
Հայաստանի Ժուռնալիստների միության անդամ
Լուսանկարները՝ ԽԱՆԴՈՒԹ ՊԱՐՈՒՅՐՅԱՆԻ**

Աշխարհահռչակ ջութակահարի ցնցող մրահդացումը

Աշխարհահռչակ ջութակահար Սերգեյ Խաչատրյանը և Հայաստանի ազգային ֆիլհարմոնիկ նվագախումբը՝ Էդուարդ Թոփչյանի ղեկավարությամբ, «Արամ Խաչատրյան» համերգասրահում մայիսի 5-ին կայացած համերգից հետո, մայիսի 13-17-ը համերգներ ունեցան նաև Հայաստանի մարզերում՝ Գյումրիում, Մեղրիում, Կապանում, Գորիսում: Մարզային այս համերգաշարը ծրագրված էր իրականացնել 2023 թ. նոյտեմբերին՝ Արամ Խաչատրյանի ծննդյան 120-ամյակի շրջանակներում, սակայն պատերազմական իրավիճակով պայմանավորված՝ այն չեղարկվել էր: Սերգեյ Խաչատրյանի հետ հանդիպման ժամանակ նրան հիշեցրեցինք իր հավատաստիացումը, թե ամեն ինչ կանի, որպեսզի մարզային համերգները շարունակական լինեն, որ մարզերի մշակութային կյանքի ակտիվությունը պետք է հայ արտիստների առաքե-



լուրջունը լինի: Երևանում Գորիսում Մեր գլուցակիցը պատասխանեց, թե ինքը գիտակցում է, որ համերգներով որևէ խնդիր լուրջ լուծում չի ստանում: Դրանք ընդամենը դրական կաթիլ են օվկիանոսում իսկ ցանկացած խնդրի լուծում տեսնում է ամենօրյա տրնաջան աշխատանքի մեջ: Ապա որոշ պառուզայից հետո ցնցող հետեյալ միտքն արտահայտեց՝ «Ժրականում դա տեսնում եմ ջութակի դպրոց հիմնելով, ինչը կա իմ ծրագրերում: Սյս գործն իհարկե, պահանջում է անմնացորդ նվիրում եմ ֆինանսական լուրջ ներդրում: Ցավոք, մենակարարի կարգավիճակս հասկանալի պարզառով թույլ չի՝ կալիս, առաջում...»:

ՍԱՄՎԵԼ ԴԱՆԻԵԼՅԱՆ
<https://www.aravot.am/2024/05/22/1420822>

**Մայիսի 22-ին գերմանալեզու մեդիան արժևորեց
100-ամյա Շառլ Ազնավուրին**

1 Շանստնն անշուշտ Ֆրանսիայինն ու Բելգիայինն է, սակայն մեծ Արտիստի՝ Ազնավորի ծննդյան 100-ամյակի օրը՝ մայիսի 22-ին, գերմանալեզու լրատվամիջոցների անդրադարձն այնքան ճշգրիտ բնութագրեց 161 սմ հասակով բեմի և էկրանի հսկային, որ թվաց, թե գերմանացիները որսացել են նրա՝ ֆրանսերեն օտար բառերի մակերեսի, մաշկի տակ անշփոթելի մի շերտ, որ քնքուշ լեզվի սահմաններից անդին է, բոլոր զգայարաններին «դիպչում է»՝ սրտից ուղեղին է հասնում, կարևորն՝ այնտեղ մնում է. Նրա տեքստը միտք է նորոգում:

Մյուս կարևոր հանգամանքը, որ գերմանացիների ուշադրությունն է քննեղ՝ Ազնավուրի՝ ինքնիրեն ստեղծելու ուժն է։ Բոլոր հողվածներում, հրապարակումներում, ռադիոհաղորդումներում շեշտվում է Շահնուր-Շառլի թաաջին բեմերը՝ հազիվ 30 քմ սենյակում հայ գաղթականների Ազնավուրյան ընտանիքն ապրում էր սերնավելացնելով, նշակույթին կառչած, վտարանդի այլ հայերի հետ արարման անմեկնելի ուժն էր, որ անսպառ կենսականություն հաղորդելով հաղթահարելի էր դարձնում կենցաղային դժվարությունները։ Երկլեզու ստեղծագործական միջավայր՝ հայերեն, ռուսերեն երգ, բաց ունկն, որ որսում է ազգային, ժողովրդական երգի հարուստ գանձերը, յուրացնում դրանք, խառնում ելևէջների հետ... Հետո մեծ բեմ՝ անհաղթահարելին հաղթահարելու հանձնառություն։ Վերապրողի կանքն է այն շարժիչը, որ Ազնավուրի բնատուր տաղանդը բարձրացրել է այնպիսի աստիճանի, որ սրցակցությունից դուրս է դրել նրան Ֆրանսիայում և այլուր՝ դարձնելով բոլոր ժամանակների մեծ Արտիստ՝ Պառնասի բնակիչ։ Նա գիտեր հանդիսատեսին սիրելու, գերելու գաղտնիքը։

Զայնը, արտիստիզմը, իմաստուն միտքը, անկեղծություներ, ճաշակը, անսահման աշխատասիրությունը՝ բազմալեզու երգիչ, 60-ից ավելի ֆիլմերում դերակատարում, 100 միլիոն վաճառված ալբոմ, անհաշվելի համերգներ, անհավատալի մահվան բոթից մի քանի օր առաջ 94-ամյա Ազնավուրը ճապոնիայում դեռ բեմի վրա էր... ամեն քան Ազնավուրի մասին արտահայտվելիս կարևոր է գերմանագիր լրագրությունը, նաև՝ երաժշտագիտական կարծիքը, որ շեշտադրում է Ազնավուրի 1000-ի սահմանին հասնող երգերի տեքստերի ամուր հենքը, որ անխաթար պիտղ է մնում նաև գերմաներեն թարգմանված տարբերակներում։ Լրագրությունն ընդգծված հիշատակում է տաբու թեմաներն (70-ականներին նույնաստեղականների մասին երգի մասին է խոսքը՝ Ան. Հ.) արժարժեքում Ազնավուրի համարձակության, հանդուրժողականության, երիտասարդների սատարելու մասին։

Տպագիր «Ազգ»ի սուղ տարածքի հրամայականն է առիպուն ամփոխ՝ վերնագրերով ներկայացնել Հաղ Ազնավորի ծննդյան 100-ամյակի առիթով մայիսի 22-ի մեղիաարձագանքը:

«Ֆրանսիական մեղամաղձի ձայնը» («Բայրիշե ռուտ-ֆունկ»), «Հանստը շարունակում է ապրել», «Հառ Ազնա վուր. Նա մարմավորեց շանտոն այնպես, ինչպես որևէ մեկը չհաջողեց» (*NDR*), «Խոսքոտ ձայնով թզուկը» դարձավ հաջողության հսկան» (շվեյցարական *SRF*), «Ամենահանրաձայնոր իսկը» («Դրոյսիշե փոլեմայնե ցայթունգ»), «Հանստի Նապոլեոնը» («Դոյչլանդ ֆունկ»):

«Հսկան, լեզանդր, XX դարի մեծագույն արտիստներից մեկը, դասական վերջին շանտուիսեն»... երաժշտագետ Գերտ Հեգերը առանձնահատուկ սիրով է պատմում Ազնավուրի մասին: Նա, թվում է, ամեն բան գիտի թե՛ Շահ-նուր Ազնավուրյանի, թե՛ Շառլ Ազնավուրի մասին, և գերմանական «Դոյչլանդֆունիկ-կուլտուր»-ի մայիսի 22-ի եթերից նրա խոսքը գերմաներեն սիրառատ պատմություն է *Aznovoice*-ի և Ազնավուրի մասին, որ չի մոռանում արժևորել նաև Ազնավուրի մարդկային բացառիկ որակը՝ «երբ հայտնի դարձավ, որ Լայգա Մինենի կաթված է ստացել, հաջորդ օրն Ազնավուրը ԱՄՆ-ում էր՝ իր հարազատ ընկերոջ հիվանդանոցի մահճի մոտ»:

Հեգերն իհարկե չմոռացավ, որ Ազնավուրը Շվեյցարիայում և ՄԱԿ-ում ՀՀ դեսպանն էր։ Նա միջազգային առյախններում իր նախնիների երկրի ամենակարևոր ներկայացուցիչներից մեկն էր 1988-ի երկրաշարժից ի վեր։ Նա արդարաոթան ձայնն էր, երբ Թուրքիայից պահանջում էր րնդունել Հայոց գերաախանությունը։

Գերմանական ՋԼՄ-ներն իրազեկում են, որ 2024-ին տարբեր քաղաքներում զանազան միջոցառումներ են նախատեսված ի ոգեկոչումն Ազնավուրի ծննդյան 100-ամյակին:

ԱՆԱՀԻՏ ՀՈՎՍԵՓՅԱՆ,
Գերմանիա

[https://azg.am/analytics/aznowoice-](https://azg.am/analytics/aznowoice-%D5%A1%D5%BA%D6%80%D5%A5%D5%AC%D5%B8%D6%82-%D5%BE%D5%A5%D6%80%D5%A1%D5%BA%D6%80%D5)

**Շառլ Ազնավուրի ծննդյան 100-ամյակը
հանդիսավորապես նշվեց Գորիսի
Շառլ Ազնավուրի անվան դպրոցում**

Երբ Գորիսի հեղոսների պանթեոնի ճանապարհի մոտ գտնվող նախկին պիոներ պալատի շենքում տեղակայվեց քաղաքի երկրորդ երաժշտական դպրոցը, կարճ ժամանակ անց այն կոչվեց Շառլ Ազնավուրի անունով: Դա մարդու կենդանության օրոք անվանակոչության բացառիկ երևույթ էր Հայաստանում (հետագայում՝ դպրոցի հիմքի վրա, վերակազմավորվեց Շառլ Ազնավուրի անվան արվեստի դպրոցը): Ազնավուրը ողջ էր, և ոչ ոքի մտքով երբևէ չէր անցնի, թե նա մինչև կյանքի վերջը մի քանի անգամ կայցելի Գորիս: Շատերի հասնար այսօր էլ անբացատրելի է, թե Սյունիքի մարզի ամբողջ բնակավայրերից ինչու՞ Ազնավուրի սիրաբը շահեց հենց մեր զարմանահարաշ Գորիսը:



Գորիսի Շառլ Ազնաւուրի անվ. արվեստի դպրոցի սաները:

... Դպրոցի տարեգրության հիշարժան դեպքերից է 1994 թ. այն օրը, երբ Շառլ Ազնավուրն առաջին անգամ ժամանեց Գորիս: Նրա պատվին Գորիսի թատրոնի լեվ լեցուն դահլիճում կազմակերպվեց հանդիպում քաղաքի հասարակության հետ, որն ուղեկցվում էր գրական-գեղարվեստական համադրությամբ: Միջոցառման ժամանակ հանդիսության մասնակից մի փոքրիկ աղջիկ բարձրացավ բեմ և մեծ շրջանակով գեղեցիկ նկար նվիրեց Ազնավուրին: Անակնկալից զգացված՝ Ազնավուրը վերցրեց նկարը, գրկեց աղջնակին: Քանի որ բեմահարթակից չհեռաց, թե աղջիկն ով էր և նրա տվածն ինչ էր, Գորիսի Շառլ Ազնավուրի անվան երաժշտական դպրոցի աշխատակցի Մուսաննա Հովհաննիսյանը հանկարծակի բեմ բարձրացավ և խոսափողով հնչեցրեց.

– Միրելի Շառլ Ազնավուր: Ձեզ նվիրածը Գորիսի՝ Ձեր անունը կրող երաժշտական դպրոցի սան Լուիզա Ադամ-յանի նկարած կտավն է:

– Ինչպե՞ս ... Այս քաղաքում իմ անունով երաժշտական դպրո՞ց...

Դահլիճն ակտիվացավ, թնդացին ծափահարություններ...

* * *

Գորիսի Շառլ Ազնավուրի անվան արվեստի դպրոցի տարեկան հաշվետու համերգն այս անգամ այլ իմաստ, նպատակ և խորագիր ունեւ: 2024 թ. մայիսի 22-ը Շառլ Ազնավուրի ծննդյան 100-ամյակի օրն էր, և դպրոցի տնօրինությունն ազնավուրյան տարվա միջոցառումների զարդը համարեց հենց այդ գերեկությոյր:

Դպրոցի առաջին հարկի ընդարձակ ձևնասրահը տոնական տեսք էր ստացել: Վերևում դպրոցի կերպարվեստի բաժնի դասատու Լիլիթ Մեժդոյանի հեղինակած՝ Ազնավուրի մեծադիր գծանկարն էր: Աջ և ձախ կողմերում՝ «Շառլ Ազնավուր-100. հավերժ սեր» խորագիրը: Այս արտահայտիչ բառերի աջ և ձախ կողմերում, համապատասխանաբար, Հայաստանի և Ֆրանսիայի պետական դրոշներն էին: Ուշագրավ դիպված. միջոցառումը փակ դահլիճում չէր անցկացվում. թեև բաց դուռ չկար, բայց, ո՛վ զարմանք, թեթև միջանցիկ քամին ողջ միջոցառման ընթացքում մեղմորեն ծածանում էր Հայաստանի և Ֆրանսիայի դրոշները, ու, իրարից հեռու, բայց այնքան համաչափ, որ կարծես խորիքանշում էին հայ-ֆրանսիական ամուր ու օրեց-օր ավելի ամրապնդվող կապերը: Բնիկ երկու կողմում դրված էին կերպարվեստի բաժնի դասատուներ Ռուզաննա Հովսեփյանի և Մերի Բունիաթյանի՝ Ազնավուրի խոշոր դիմապատկերով երկու գծանկարը, ամեն մի նկարի մոտ՝ դպրոցի սաների պատրաստած հայադուրյն ձևված ինքնաստիպ սափորների ցուցասեղաններ, որոնց ձեղքերից մտնա-

այնպես էր մութը ճեղքում, ասես Ազնավուրի միջոցով հայ մշակույթի լույսի հաղթանակն էր տոնվում՝ ընդդեմ խավարի:

Դպրոցի սաների հաղորդավարական մուտքն ու տեքստային անցումներն ամբողջապես շաղախված էին Ազնավուրով. ծնունդ, դժվարին կյանք, երգարվեստի հաղթարշավ, համաշխարհային ճանաչում, համբավ ու փառք, բայց միշտ իրեն պարզ ու հասարակ պահող մի մահկանացու... Մեծ հայ, բարեգործ, Հայաստանի հետ կապերը միշտ անուր պահող երևույթ:

Համերգացանկում ընդգրկված էին Ազնավուրի «Քեզ համար, Հայաստան», «Հավերժ սեր», «Լա Բոհեմ», «Ալե Մա-րիա» ստեղծագործությունները: Սրտից բխած սեր տարա-ծեցին դպրոցի երգչախմբի ղեկավար Էմմա Ղազարյանի դիրիժորությամբ՝ դպրոցի երգչախումբը, Գոռ Դադայանի ղեկավարությամբ՝ փողային քառյակը (շեփոր՝ Գոռ Դա-դայան, բարիտոն՝ Մարտին Սաթոնյան, ջութակ՝ Մարտուն Դա-դայան, կլարնետ՝ Հովսեփ Հովհաննիսյան), Նարինե Բաղ-դասարյանի ղեկավարությամբ, Նելլի Մանուչարյանի նվագակցությամբ՝ նվագախմբի անսամբլը:

Երգարվեստի բազմաթնույթ ճյուղեր ընդգրկող միջոցառման հազեցած ծրագրում ընդգրկված էին հայ և համաշխարհային երգարվեստի գլուխգործոցներ՝ Սայաթ-Նովա՝ «Քամանչա», Սպենդիարյան՝ «Հիջազ», Ա. Խաչատրյան՝ «Դմանակահանդես», Մավիսակալյան՝ «Ջան», Հայաստանի, Պետրոսյան՝ «Կոնցերտային Էքսպոնոն», Նեղոյան՝ «Կղր պար», Խ. Ավետիսյան՝ «Հակաչներ», Պետրոսյան՝ «Հայկական ժողովրդական երգերի շարան», Դ. Հալաջյան՝ «Յար կկոնդա», Ռ. Ամիրխանյան՝ «Երազի իմ, երկիր, Հայաստան», Շմիտց՝ «Ամերիկյան ջազ», Չիարս՝ «Իսպանական Բոլերո», Միշել Մանգան՝ «Ռոմանս», Վիվադդի՝ «Կոնցերտ Լյա մինոր 2 ջութակի համար», «Փարիզի երկնքի տակ», Բայերեդերի շարան։ Իրենց կատարողական արվեստը բարձր մակարդակով ցուցադրեցին դասատուներ՝ Նելլի Մանուչարյանը, Մերի Ջավահիրյանը, Նաիրա Գրիգորյանը, Հովսեփ Հովհաննիսյանը, Մնահիտ Հովհաննիսյանը, Ռոմիկ Օհանջանյանը, նվագակցողներ՝ Էմմա Ղազարյանը, Նելլի Մանուչարյանը, Նաիրա Գրիգորյանը, դպրոցի սաներ՝ Տաթև Մանգասարյանը, Արևիկ Առուստամյանը, Մոնիկա Մախիճյանը, Ֆրիդա Բաղդասարյանը, Հարություն Ասատրյանը, Կարինա Միրաբյանը, Մարիետտա Գևորգյանը, Եսթեր Արզումանյանը, դպրոցի երգչախումբը, վոկալ անսամբլը (ղեկավար՝ Էմմա Ղազարյան), ջութակահարների անսամբլը (ղեկավար՝ Մնահիտ Հովհաննիսյան), նվագարանների անսամբլը (ղեկավար՝ Նարինե Բաղդասարյան), փողային քառյակը (ղեկավար՝ Գոռ Դադայան), փողային նվագախումբը (ղեկավար՝ Արմեն Գրիգորյան)։

ՀԳ-1 Իբրև վերջաքան, Ազնավուրի ծննդյան օրվան համահունչ պատշաճ համարեցի «Սյունյաց երկրի» ընթերցողին հիշեցնել մեծանուն երգչի մահվանից 7 տարի առաջ, 2011 թ. հոկտեմբերի 7-ին «Լուվել դ'Ալմեննի» թերթի թղթակցի հարցերին Շառլ Ազնավուրի մի քանի ցնցող պատասխանները.

«Մեր հավաքականորդները մեզանից սպասում են, որ նրանք, ովքեր դեռ հիշողություն ունեն, մեռնեն, որպեսզի դրանից պրծնեն:

... Ո՛րք ենք գնում մենք: Այս ընթացքում Հայաստանը փառապում է, ամեն օր: Հայաստանը դապարկվում է: Քիչ ժամանակ անց այն կդառնա մի դապարկ խխունջ: Ո՞ւմ է դա ձեռնարկ...

Հայաստանը մեծ վրանգի մեջ է...»:

ՀԳ-2 Գործիս Շառլ Ազնավուրի անվան արվեստի դպրոցը՝ Մայիս Գալստյանի ղեկավարությամբ, հիրավի, դարձել է Գործիսի մշակութային կենտրոններից մեկը, ինչի հերթական ապացույցն էր նաև մայիսի 22-ին կազմակերպված գեղեցիկ ցերեկայոթը՝ նվիրված Շառլ Ազնավուրի ծննդյան 100-ամյակին:

II
ՎԱԶԵ ՄԿՐՏՅԱՆ

«Հայասրանի փոքրիկ երգիչների» համերգային շրջագայությունը Գերմանիայում



«Հայասրանի փոքրիկ երգիչներ» երգչախումբ, խմբավար Տիգրան Հեքեյան

Երևանի քաղաքապետարանի «Հայաստանի փոքրիկ երգիչներ» երգչախումբն օրերս է վերադարձել Գերմանիայում ունեցած համերգային շրջագայությունից: Մայիսի 3-17-ը՝ կես ամսից ավելի, Տիգրան Հեքեյանի ղեկավարությամբ հայ երգի ղեկավարներն իրենց կատարումներով զարդարում էին գերմանական 4 տարբեր քաղաքների պատկառելի հարթակները, հայ արվեստով լցնում տեղի տաճարներն ու մարդկանց սրտերը: Շրջագայությունը սկսվեց Համբուրգ քաղաքից: Երգչախմբի առաջին համերգը կայացավ սուրբ Գերտրուդի տաճարում՝ տեղի հայտնի Համբուրգի աղջիկների երգչախմբի հետ

դիսատեսի թվում գտնվող մի տեղական երգչախումբ մինչև անգամ հանպատրաստից երգ ձուներ հայ մանուկներին: Դե, վերջիններս էլ, պարտք չմնալով, գերմաներեն լեզվով հայտնի Բրամսի օրորոցայինը նվիրեցին ներկաներին, ովքեր երգը լսեցին արցունքն աչքերին: «Հայաստանի փոքրիկ երգիչներ»-ի հաջորդ հանգրվանը Հանովերն էր, որտեղ խումբը մայիսի 8-13-ը մասնակցելու էր Հանովերի մանկական և պատանեկան երգչախմբերի միջազգային փառատոնին:

Մայիսի 8-ին տեղի ունեցավ փառատոնի հանդիսավոր բացումը Հանովերի Կոնգրեսների 3000 տեղանոց

ունեցած նման հանդիպում - համերգների շնորհիվ արդեն լայն տարածում է ստացել և մեծ սեր է վայելում աշխարհի տարբեր երաժշտական շրջանակներում: Մայիսի 5-ի առավոտյան երգչախումբն իր երգեցիկ ծայր միացրեց ս. Հակոբի եկեղեցում մատուցվող սուրբ Պատարագի արարողությանը՝ կիրակնօրյա հանդիսությանը միահյուսելով միջնադարյան հայ շարականների, Կոմիտասի, Եկմայանի, հայ ժամանակակից կոմպոզիտորների հոգևոր գանձերի հնչյունները: Նույն օրվա երեկոյան երգչախումբը մեկ այլ եկեղեցում՝ Համբուրգի Յուրիլատե հոգևոր կենտրոնում մենահամերգ ուներ, որը ևս մեծ ոգևորությամբ ընդունվեց ունկնդրի կողմից: Երեխաների ելույթից խանդավառված՝ հան-

հարթակում, մյուսը Հանովերի լավագույն դահլիճներից մեկում՝ Ռադիոյի 2000 տեղանոց համերգասրահում, ապա Մադրեաս Սփրինգե եկեղեցում: Երգչախումբն ինչպես միշտ ունկնդրին ներկայացավ բազմաժանր, բարձրակարգ կատարումներով, որոնք արժանվույնս գնահատվեցին փառատոնին մասնակից մասնագետների, երաժիշտների, պարզապես ներկա հանդիսատեսի կողմից: Մայիսի 12-ին երգչախումբը մասնակցեց փառատոնի փակման արարողությանը: Մյուս երգչախմբերի թվում Տիգրան Հեքեյանի փոքրիկները կատարեցին իրենց լավագույն ստեղծագործություններից մի քանիսը, ապա բոլոր երգչախմբերով երգեցին միացյալ ուժերով ամենօրյա աշխատարանների ընթացքում ստեղծած փառատոնի փակման երգը, որտեղ յուրաքանչյուր խումբ երգում էր սեփական լեզվով իր իղծերի, մարդկությանն ուղղված մաղթանքների մասին, ապա միասնում հզոր ու շքեղ կրկնեցին: Միացյալ երգչախմբի կատարմանը ծայնակցում էր նաև բազմահազարանոց սրահի ունկնդիրը, և հույզերը, սերն ու միասնականության զգացումը թևածում էին համերգադահլիճում: Թերևս, սա հենց այն իրական նպատակն էր, որ հետապնդում էին միջոցառման կազմակերպիչները, և իրենց դա հաջողվեց: «Հայաստանի փոքրիկ երգիչներին» Հանովերի փայլուն հարթակներից և ծափերի տարափից հետո սպասում էր Դորտմունդի հայ համայնքը, որտեղ Հունան Եղոյանի հիմնադրած «Մենք» երիտասարդաց միության ջանքերով և հայ ընտանիքների ուժերով կազմակերպվել էր երգչախմբի կեցությունն ու մայիսի 14-ի համերգային ելույթը *Orchesterzentrum* դահլիճում: Բայց մինչ այդ երեխաներին անակնկալ էր սպասվում՝ մատուցված Դորտմունդի հայ գործարար Թովմասյան ընտանիքի կողմից: Երեխաներն անմոռանալի տպավորություններով հագեցած մի օր անցկացրեցին Դորտմունդի ձանապարհին գտնվող Ֆանտազիալենդ առրակցիոնների այգում, որտեղ տեղակայված են աշխարհի ամենաարագ և էքստրեմալ տասնյակի մեջ մտնող առրակցիոնները: Արդյունքում, թերևս, երգչախմբի անդամներն ապրեցին այս շրջագայության և իրենց կյանքի ամենատարբերվող, գունեղ ու խիստով լեցուն օրերից մեկը: Հաջորդ քաղաքը, որտեղ սպասում էին մեր երգող մունետիկներին, Մյունխենն էր: Այստեղ Տիգրան Հեքեյանի ղեկավարությամբ երգչախումբը համերգով հանդես եկավ *Bürgerhaas Haar* համերգադահլիճում՝ կազմակերպված «*Dav Social*» ընկերության կողմից: Մյունխենում 2 օր երգչախմբի անդամներն ապրել են *Burg Schwaneeck* դոյակում և մշտապես գտնվել են Յորան և Սոնա Կրյուգերների հատուկ հոգածության ներքո: Միջոցառման ընթացքում ելույթ ունեցավ նաև Թուրին մանկական արական երգչախումբը: Համերգի ավարտին այս անգամ ևս երկու երգչախմբերը միասին հայերեն լեզվով կատարեցին Էդգար Հովհաննիսյանի «Էրբունի-Երևան»-ը, ինչը մեծ խանդավառությամբ ընդունվեց ունկնդրի կողմից: Երգչախումբը վերադարձավ Հայրենիք մեծ հոգեկան «ավարով»՝ հարստացած տպավորություններով, մարդկանցից ստացած ջերմությամբ, ծափերի տարափն ականջներում: Առջևում երգչախմբին սպասում է Մյունիքը, որտեղ մայիսի 26-29-ը նորից երգն է թևածելու, Տիգրան Հեքեյանի կողմից անցկացվող «Երգով ու Միքով» ամենամյա՝ այս անգամ արդեն 4-րդ փառատոնի կոչնակների ներքո: Հաջողություն մաղթենք մեր գանձերին և հետևենք նրանց հետագա համերգարշավին:



«Հայասրանի փոքրիկ երգիչներ» երգչախումբ, խմբավար Տիգրան Հեքեյան

համատեղ: Միացյալ համերգն ավարտվեց արդեն ավանդույթ դարձած Էդգար Հովհաննիսյանի «Էրբունի-Երևան» երգի համատեղ կատարմամբ՝ ստեղծագործություն, որ մեր երգչախմբի հետ օտարերկրյա խմբերի

երգաստեղծական հետաքրքիր վարժանքների տեսքով, թե երեկոյան ուրախ ու հիշվող խնջույքների, միացյալ և առանձին ելույթներով: «Հայաստանի փոքրիկ երգիչներ» երգչախումբը փառատոնի շրջանակներում ունեցավ ևս երեք մենահամերգ, մեկը Քրիստոսկիրիսի նորակառույց

Մարինե ՄԱՐԳԱՐՅԱՆ

<https://www.aravot.am/2024/05/23/1421236/>

Մայիսի 22-ին գերմանալեզու մեդիան արժևորեց 100-ամյա Շառլ Ազնավուրին

8

<https://syuniacyer.kir.am/sharl-aznavuri-tsnndyan-100-amyaky-handisavorapes-nshvets-gorist-sharl-aznavuri-anvan-dprotsum>

«2024 թ. մայիսի 20-ին ՀՀ կենտրոնական բանկը շրջաձառության մեջ է դնում «Շառլ Ազնավուրի ծննդյան 100-ամյակ» ոսկե հուշադրամը»։ տեղեկացրել են ԿԲ-ից: Շառլ Ազնավուրի ծննդյան 100-ամյակին նվիրված հուշադրամ. Դիմերես՝ Շառլ Ազնավուրի հուշարձանը Գյումրիում (քանդակագործ՝ Ս. Պետրոսյան, ճարտարապետ՝ Ա. Թար-

խանյան, 2002 թ.): Դարձերես՝ Շառլ Ազնավուրի դիմապատկերը, 100 թիվը՝ ոճավորված նոտաների տեսքով, դաշնամուրային ստեղներ և միկրոֆոն: Էսքիզների հեղինակներ՝ Վարդան Վարդանյան (դիմերես), Կարեն Մելիքյան



(դարձերես): Հուշադրամը հատվել է Լեհաստանի դրամահատարանում: Տեխնիկական չափանիշները՝ Անվանական արժեքը 10 000 դրամ մետաղը/հարգը ոսկի 9990, քաշը 8,6 գ, տրամագիծը 22,0 մմ, որակը պրուֆ, դրամաշուրթը ատամնավոր, թողարկման քանակը 500 հատ, թողարկման տարեթիվը 2024:

<https://factor.am/774440.html>

ԲԱՅ ՆԱՄԱԿ

«ԵՊԿ հրատարակություն»
«Երաժշտական Հայաստան» ամսագիր
«Երաժիշտ» ամսաթերթ

Երաժշտագետի, հրատարակչի, ժուռնալիստի նամակ ՅՈՒՆԵՍԿՕ-ին: Անհանգստացած եմ Հայրենիքիս, գործընկերներիս և իմ ստեղծած ազգային արժեքների ճակատարգրով:

Ես՝ Գոհար Շագոյանս, հայտնի եմ Հայրենիքում, Սփյուռքում, Արցախում, Ֆրանսիայում, ԱՄՆ-ում, Գերմանիայում, Լեհաստանում, Ռուսաստանում, Լիբանանում, Էկվադորում, Արգենտինայում և այլ երկրներում որպես երաժշտական քննադատ, հրատարակիչ, հրապարակախոս-ժուռնալիստ, ՀՀ-ում երաժշտական մասնագիտական ինչպես նաև գիտական մամուլի հիմնադիր, Միջազգային ժուռնալիստների ֆեդերացիայի անդամ (2023 թ.), երաժշտագետ: Արժանացել եմ՝ 2003-ին՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի Արամ Խաչատրյանի ծննդյան 100-ամյակին նվիրված հուշամեդալի, AAD Հայաստան-Սփյուռք-Արցախ ՀՀ ԱԳՆ Կայքի Մշակույթում ներդրման համար Պատվոգրի և նշանի (2019 թ.), ՀՀ ԿԳՄՄՆ Ոսկե մեդալի՝ ՀԿՄ 90-ամյա հոբելյանի առթիվ և Հայ երաժշտության ոլորտում ունեցած նշանակալի ավանդի համար (2022 թ.), Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի (ԵՊԿ) 100-ամյակի մեդալի՝ երկարամյա վաստակի և հոբելյանի առթիվ (2023 թ.) և այլ պարգևատրումների:

ՀՀ քաղաքացի եմ, ապրում ու աշխատում եմ Երևանում: Հիմնադրել եմ Երևանի պետական կոնսերվատորիայի «Երաժշտական Հայաստան» գիտական միջազգային ամսագիրը (1998-ից, հիմնադիր-գլխավոր խմբագիր) և «Երաժիշտ» հանրապետական ամսաթերթը (2005-ից, հիմնադիր-թողարկման պատասխանատու խմբագիր), ինչպես նաև Հայաստանի կոմպոզիտորների միության պաշտոնական մամուլները (լինելով միակ պաշտոնական մասնագիտական մամուլի հիմնադիր ՀԿՄ նախագահի հետ)՝ «Հայ կոմպոզիտոր» ամսագիրը (2017-ից, հիմնադիր-պատասխանատու քարտուղար) և «Հայ կոմպոզիտորների ստեղծագործական գունապնակն արդի աշխարհում» գիտական ժողովածուն (2023-ից կազմող-հիմնադիր), որոնցում զետեղվում են կոնսերվատորիայի և այլ բուհերի պրոֆեսորադասախոսների ու կոմպոզիտորների և նրանց ստեղծագործությունների մասին հոդվածներ: Այս ամենը տարածվում է աշխարհով մեկ: Աշխատում եմ բազմաթիվ ականավոր հայ, ֆրանսիացի, ռուս, ուկրաինացի, գերմանացի, ամերիկացի, լեհ, վրացի և այլ ազգերի երաժիշտ-հեղինակների հետ, քանի որ մամուլը բազմալեզու է և հրատարակվում է բնագրերով:

Կարծում եմ, որ ես իրավասու եմ գրելու այս նամակը՝ իմ մասնագիտական փորձառության դիրքից ելնելով, և որովհետև քաջատեղյակ եմ (իմ գործունեության բերումով) Հայրենիքում մշակութային՝ հատկապես երաժշտական կյանքում և հոգևոր ասպարեզում տեղի ունեցող իրադարձություններին: Բիրտ ուժի կիրառումն իշխանության կողմից ռատիկանության միջոցով խտուսում է իշխանության վախերի՝ իրենց պոռոների կորստի, Հայրենի հողատարծրի գիջումների մասին՝ մարդկանց հանդեպ անհասաչափ բիրտ ուժի կիրառմամբ:

Հայաստանը հանրապետությունն իր կառավարման պատմության ընթացքում երբեք չի ունեցել գեթ մեկ կառավարություն, որ իր գործունեության արդյունքում Հայրենիքը կորստյան տաներ և միայն կորուստներ արձանագրեր, և դրական փոփոխությունները եղել են այնքան չնչին, նույնիսկ չարժե արվեստագետ – մտավորականի կողմից անդրադարձնալ դրանք, հանգամանալի և փաստարկներով թողնում եմ մասնագետներին և իրավապահներին:

Նշենք, ՀՀ «Տավուշը հանուն հայրենիքի» Տ. Բագրատ արքեպս. Սրբազան Գալստանյանի առաջնորդությամբ Քաղաքացիական շարժումը՝ «Հայրենիքը ստից ու կեղծիքից ազատելու համար՝ հանուն ծնարարության և արդարության»՝ Հայ-Հայաստան-Հայրենիք ու Աստված կարգախոս-երգով: (Առավել մանրամասն տե՛ս՝ <https://www.facebook.com/profile.php?id=61557676384471>) և մինչև այդ ԱԺԲ-ի շարժումը և ամիսներ շարունակ Ազատության հրապարակում նստացույցերը: Դիրքիդոր, հիանալի երաժիշտ, ժուռնալիստ և քաղաքական մեկնաբան Վարդան Հակոբյանի ազգանվեր և հայրենասեր տեղեկատվության տարածման գործունեությունը և այլն:

Մինչև այս մեկ ամսյա դեպքերը խայտառակ որոշում կայացրեցին՝ սկզբում լրաձու եղավ և տեղեկացանք 45, այնուհետև մի քանի օր հետո վարչապետը 60 բուհերի և գիտական ինստիտուտների տեղափոխման և մեկ տարածքում որպես քանփուս կամ ինչպես իրենք են ասում կլաստեր կառուցելու մասին վկայեց (ասեմ կլաստեր բառը երաժշտական տերմին է և նշանակում է պատահական



Երևանի Կոմիտասի անվ. պետական կոնսերվատորիա, Կոմիտասի հուշարձանի քանդակագործ՝ Արա Հարությունյան, ճարտարապետ՝ Ֆենիքս Դարբինյան

զուգորդված համահնչյուններ՝ կազմված փոքր և /կամ մեծ սեկունդաներից, երբեմն միկրոինտերվալներից: Երաժիշտները լավ պատկերացրեցին այդ անհամապատասխանության չափը: Սակայն կան բուհեր, որոնք իրենց գործառնություններով և տեղակայությամբ թամայանական մայրաքաղաքի՝ Երևանի սիրտն են կազմում ինչպես առաջին հերթին ԵՊՀ ու Կոմիտասի անվ. ԵՊԿ, Խ. Աբովյանի անվ. ՀՀ, Գեղարվեստի և թատրոնի ու կինոյի ինստիտուտները, Ակադեմիական շատ կարևոր ինստիտուտներ՝ ինչպես ՀՀ ԳԱԱ Հրաչյա Աճառյանի անվ. լեզվի կամ ՀՀ ԳԱԱ արվեստի, ՀՀ ԳԱԱ Արտիստի անվ. գրականության կամ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտներն իրենց համալիր գրադարաններով, որտեղ մենք՝ երաժշտագետներս համագործակցում ենք. առենախոսությունների թեզերն են իրականանում, և ոչ միայն, անընդմեջ դիմում ենք խորհրդակցության համար կամ կազմակերպում համատեղ գիտաժողովներ: Բոլոր թվարկածս ինստիտուտները գտնվում են մայրաքաղաքի կենտրոնում և ուսանողության շարժունության, կրթության և դաստիարակության առումով մեծ ներդրումներ ունեն:

Անդրադառնամ իմ հարազատ բուհին՝ Կոմիտասի անունը կրող և պարուրված նրա անունով այգով, հիացմունքի արժանի այգու կենտրոնում գտնվող հուշարձանով փոքր կենտրոնում համալիր երաժշտական կենտրոններով շրջապատված, ինչպես բոլոր եվրոպական և ոչ միայն, բոլոր քաղաքակիրթ երկրներում, գտնվում է հանրապետության միակ բուհը՝ Պետական կոնսերվատորիան, որի մասնաճյուղն էլ գտնվում է նույն ձևով մտածված Գյումրիի կենտրոնում մեկ շենքում գեղարվեստի և թատրոնի և կինոյի ակադեմիաների մասնաճյուղերի հետ միասին հիմնարկված իրանահայ դիրիժոր, կոմպոզիտոր Լորիս Ճգնավորյանի կողմից: Մեր բուհը ընդգրկում է մարտից սկսած առ այսօր համակոնսերվատորիական միացյալ ժողով գումարելով՝ ուսանողից մինչև ռեկտոր, պահպանելու համար բուհն իր տեղում շենքային համալիրով: Ամփոփապես Ուսանողական խորհրդի կողմից կազմակերպվեց աշխարհով մեկ սփռված հայ երաժիշտների 6000 հոգու ստորագրահավաք՝ մեկ շաբաթվա ժամանակահատվածով: Հղումը տե՛ս՝ <https://www.facebook.com/profile.php?id=61557189935724> <https://www.facebook.com/for-conservatory>

Վստահ եմ, եթե շարունակվեր առավել շատ մեծ թվաքանակ կունենային, և հաշվի չի առնվել միջազգային ստորագրահավաքի արդյունքները: Օրինակ, իմ մեկ ստորագրությունը մոտ 1500 ստորագրություն բերեց և առաջարկվել էր 2 փուլով իմ մասնակցությունն այդ գործընթացում՝ աշխարհով մեկ բուհական հարցերի շուրջ: Օրինակ մենք հաշվեցինք մեկ օրում միայն 33 երգիչ-երգչուհիների, հիշեցինք աշխարհի լավագույն և անվանի բեմերում են գործում՝ Մետրապոլիտեն, Գրանդ-օպերա և այլն, նման անձնավորություններ են միացել մեր արդարացի բողոքին: Կամ օրինակ, Կոնսերվատորիայի շենքը հատուկ կառուցվածքով է. ունի իզոլացված դասասենյակներ կրկնակի դռներով և 3 մետր բարձրությամբ առաստաղներով, համապատասխան քանակությամբ օդորակիչների տեղադրմամբ, լուսամուտներն անգամ չեն բացվի դրսի և ներսի աղմուկից խուսափելու համար: Ի դեպ, նշենք, որ կոնսերվատորիան կառուցվել է 1937 թ. պայթեցրած Սուրբ Բարդուղիմեոս եկեղեցու հիմքի վրա (4 տարի շարունակ պայթեցվել է եկեղեցին, ակայն չի հաջողվել և մնացել է միայն հատակը, որի վրա էլ կառուցվել է 100-ամյա կոնսերվատորիայի այժմյան շենքը) և ունի խաչաձև հատակագիծ (տե՛ս՝ Արա Պապյանի ելույթները [youtube.com](https://www.youtube.com)-ում): Ուստի, սրբատեղիի վրա կառուցված մշակութային սրբությունը՝

100-ամյա կոնսերվատորիան, չի կարող տեղափոխվել, և այն հարատև է:

Առհասարակ, պետք է հոգալ մեր խնդիրները, լսել դրանք, որոնք շատ լուծելի են: Երկու տարի կլինի կապիտալ վերանորոգում է ընթանում կոնսերվատորիայում: Սա էլ անհասկանալի ֆինանսավորում է. եթե պետք է ամբողջ շինությունը մեզնից վերցնեն, ապա ի՞նչ է նշանակում այս 2 տարուց ավելի հիմնանորոգումը: Այս և այլ խնդիրների շուրջ պաշտոնապես հանդես եկավ ռեկտորը, պրոֆեսորները, և այդ ամենը հրատարակվեց «Երաժիշտ» 3 (219) 2024-ի ամսաթերթում (տե՛ս՝ yksclibrary.am):

Երևանի պետական կոնսերվատորիան աշխարհի 300 երաժշտական բուհերի թվում 2012 թվականից ընդգրկված է և համարվում է Կոնսերվատորիաների միջազգային ասոցիացիայի անդամ: Ղեկավարությունը նամակով դիմեց նրանց և ի պաշպանություն մեզ նրանք նամակով հանդես եկան (տե՛ս նույն՝ վերը նշած ամսաթերթը):

Ամբողջ Հայաստանն սկսեց ընդլվել, հատկապես ապրիլ ամսից սկսած, Հայոց Ցեղասպանության տերմինը չարտասանելու (տե՛ս Լեմկինի ինստիտուտի հայտարարությունները), Արարատի սուրբ Լեռան, մեծագույն գրողների՝ ինչպես ԲաժՖու և այլոց, մեր սրբությունների նկատմամբ ունեցվածությունների և դասագրքերում Հայոց պատմության խեղաթյուրման համար՝ հանրապետության բաժակը լցված Արցախի ունեզրկմամբ տեղահանությունը և հայաթափմամբ, և պայթեց Տավուշի գյուղերի միակողմանի սահմանազատմամբ ու հանձնմամբ՝ դարավոր թշնամուն:

«Տավուշը հանուն հայրենիքի» Տ. Բագրատ արքեպս. Սրբազան Գալստանյանի առաջնորդությամբ Քաղաքացիական շարժում է՝ «Հայրենիքը ստից ու կեղծիքից ազատելու համար՝ հանուն ծնարարության և արդարության»՝ Հայ-Հայաստան-Հայրենիք ու Աստված կարգախոսով: (Առավել մանրամասն տե՛ս՝ <https://www.facebook.com/profile.php?id=61557676384471>): Բագրատ Սրբազանը նաև Կոնսերվատորիայում է դասախոսում, մեր գործընկերն է, երկար տարիներ ճանաչում ենք իրեն և հիանում նրա դասախոսություններով ու գիտելիքով:

Մենք, հատկապես հայազգիությունը, միջնադարագիտությունը, և առհասարակ, երաժիշտներս հոգևոր կրթությամբ ու գիտելիքներով ենք առաջնորդվում մեր ողջ կյանքում, և կարող եմ բոլոր արվեստագետների մասին այդպես ասել, ուստի անհանդուրժող ենք նման ապագային դրսևորումների հանդեպ: Անարդկային մոտեցումները XXI դարում աննկարագրելի և անընդունելի են, հատկապես մեր հայ ազգի համար խայտառակություն է: Այն միակ ազգն է, որ իր բազմադարյա հազարամյակների պատմության ընթացքում քաղաքացիական պատերազմ չի՝ արել, չի՝ ունեցել, և չի՝ տեսել, անհնարին է մեզ՝ հայերիս մղել դրան:

ԳՈՀԱՐ ԿԱՌԵՆԻ ՇՄԳՈՅԱՆ
Երաժշտագետ, հրատարակիչ,
Ֆրանսիայի «Արարատ» գիտությունների
միջազգային ակադեմիայի թղթակից-ակադեմիկոս,
ՅՈՒՆԵՍԿՕ-ի Արամ Խաչատրյանի
ծննդյան 100-ամյակի հուշանդալ
Հայաստանի կոմպոզիտորների և
Հայաստանի ժուռնալիստների միությունների նաև
International Federation of Journalists անդամ

Երաժշտական անցուդարձը ԵՊԿ Գյումրիի մասնաճյուղում

✓ 2024թ. ապրիլի 9-ին ԵՊԿ Գյումրիի մասնաճյուղում տեղի ունեցավ հանդիպում անվանի կոմպոզիտոր, ԵՊԿ կոմպոզիցիայի ամբիոնի վարիչ Վաչե Շարաֆյանի հետ: Հանդիպումը շատ սպասված էր, ուստի անցավ մեծ հետաքրքրությամբ և ունեցավ ծանաչողական կարևոր նշանակություն: Կոմպոզիտորը խոսեց հատկապես ժամանակակից կոմպոզիտորական արվեստում ազգային



Հանդիպում Վաչե Շարաֆյանի հետ

բնորոշիչների խնդրի և դրսևորումների մասին: Նա ներկայացրեց դրվագներ իր ստեղծագործություններից, որոնցում առավել նկատելի էին իր գրելառձի տիպական առանձնահատկությունները:

✓ Միջազգային երաժշտական ասպարեզում ակտիվ կատարողական, կազմակերպչական և գիտական



Գայանե Միրզոյանի վարպետության դասին

գործունեություն ծավալող պոստհար Գայանե Միրզոյանը (Ավստրիա) ապրիլի 17-18-ին վարպետության դասեր անցկացրեց ԵՊԿ Գյումրիի մասնաճյուղում: Բացառիկ վարպետությամբ կազմակերպված այդ դասերը դարձան

կամերային երաժշտության կատարողական արվեստի տիրապետման ճանաչողական և գեղարվեստական նշանակալի հանգրվաններ:

✓ 2024 թ. ապրիլի 27-ին ԵՊԿ Գյումրիի մասնաճյուղ էին այցելել Գերմանիայի Դաշնությունից ժամանած *Ars Musica* արական երգչախմբի արտիստները: Բուխի և երգչախմբի բարեկամությունն ունի գեղեցիկ պատմություն: Գյումրիում Գերմանիայի Դաշնության Պատվո հյուպատոս Ալեքսան Տեր-Մինասյանի միջնորդությամբ 2021 թ. երգչախումբը



Ars Musica արական երգչախմբի անդամները ԵՊԿ Գյումրիի մասնաճյուղում

բարեգործական համերգներից հանգանակված գումարով ԵՊԿ Գյումրիի մասնաճյուղին նվիրեց տավիղ նվագարան, որը հույժ անհրաժեշտ էր ուսումնական գործընթացում: Ի երախտագիտություն այս գեղեցիկ նվիրատվության, հյուրերին իր կատարումներով ողջունեց բուխի երրորդ կուրսի ուսանողուհի Հասմիկ Մկրտչյանը: Հյուրերը շրջեցին բուխում և հայտնեցին իրենց պատրաստակամությունը հետագա համագործակցության համար: Նույն այցելության շրջանակներում, ապրիլի 28-ին Գյումրիի Մուրք Աստվածածին եկեղեցում կայանալու է երգչախմբի երաժիշտ Մայկ Գրովսենբերգի երգեհոնային համերգը:

✓ ԵՊԿ Գյումրիի մասնաճյուղը հանդես եկավ քաղաքապետարանի մշակույթի բաժնի կազմակերպած համերգին՝ նվիրված անվանի կոմպոզիտոր Վաղիլեն Բայանի ծննդյան 100-ամյակին: Ելույթ ունեցան Ալլա Հարոյանը (դոցենտ Մերի Մկրտչյանի դասարան, կոնցերտմայստեր՝ Մարգարիտա Դուկասյան), Անուշ Վարդանյանը (Հեղինե Մարութանյանի դասարան, կոնցերտմայստեր՝ Լուսինե Դուկասյան), դաշնամուրային տրիոն՝ հետևյալ կազմով. Հեղինե Խաչատրյան (դաշնամուր),



ԵՊԿ Գյումրիի մասնաճյուղի երաժիշտները կոմպոզիտոր Վաղիլեն Բայանի ծննդյան 100-ամյակին նվիրված համերգին

ուսումնական ասիստենտներ՝ Մերուժան Գևորգյան (ջութակ), Ազատ Հարությունյան (թավջութակ), ղեկավար՝ դոցենտ Անահիտ Մանվելյան, Արվինե Գրիգորյանը (դոցենտ Մերի Մկրտչյանի դասարան, Գյումրիի պետական սիմֆոնիկ նվագախումբ), դիրիժոր՝ Երվանդ Վարդանյան, Վարդ Բալաշյանը (դոցենտ Զենա Բաղդրիկյանի դասարան):

ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ ԵՆՔ

ԵՊԿ Գյումրիի մասնաճյուղի ուսանողուհի **Լյուդմիլա Հովսեփյանին**, (ուսումնական ասիստենտ Հեղինե Մարութանյան և դասախոս՝ դոցենտ Անահիտ Մանվելյան) Մոսկվայում կայացած միջազգային մրցույթում Առաջին մրցանակի արժանանալու առթիվ:

Պրոֆեսորի գիտական կոչման է արժանացել քանոնահարուհի, ԵՊԿ Գյումրիի մասնաճյուղի Հայ ավանդական երաժշտության կատարողական արվեստի բաժնի դասախոս **Անահիտ Վալեսյանը**:

Դոցենտի գիտական կոչման է արժանացել դուդուկահար, ԵՊԿ պետական կոնսերվատորիայի Գյումրիի մասնաճյուղի Հայ ավանդական երաժշտության կատարողական արվեստի բաժնի վարիչ **Կարապետ Շարոյանը**:

ԵՊԿ Գյումրիի մասնաճյուղի ուսանող **Վահրամ Բասենցյանին** (ուսումնական ասիստենտ Հռիփսիմե Պետրոսյան, դասախոս Մարգարիտա Դուկասյան) Փարիզում կայացած միջազգային մրցույթում 2-րդ մրցանակի արժանանալու առթիվ:

Նյութը քաղված է

<https://www.facebook.com/gyumriconservatory> էջից

«ԵՐԵՎԱՆՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ»

✦ 2021, Մայիսի 7-ին, ԵՊԿ 100-ամյակին նվիրված միջոցառումների շրջանակներում, առաջին անգամ բուխի պատմության մեջ, կոնսերվատորիան հյուրընկալել էր տարբեր տարիների իր շրջանավարտներին: Հանդիպման նպատակը կոնսերվատորիայի և իր շրջանավարտների միջև հաղորդակցության նոր մշակույթ սկսելն էր՝ ստեղծագործ մոտեցումներով՝ միտված ապագային: Շրջանավարտներին դիմավորեց կոնսերվատորիայի ուսանողական սիմֆոնիկ նվագախումբը՝ Նատալի Գալստյանի ղեկավարությամբ:

Երաժշտական արահետի հաջորդ հանգրվանը 2-րդ հարկի ձեմարահում լարային կվարտետ կամ այլ կազմի անսամբլների ելույթներով են ողջունում և հանդիպման երկրորդ հատվածն անցնում էր Ակուստիկ լաբորատորիայում: Ողջույնի խոսքով և ելույթներով հանդես էին գալիս ռեկտոր Սոնա Հովհաննիսյանը, պրոռեկտորները Կոնսերվատորիայի բարեկամների հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահը, ռեկտորի խորհրդականները, օպերային ստուդիայի տնօրենը: Նպատակն է շրջանավարտներին ներկայացնել կոնսերվատորիայի այսօրյա ձեռքբերումները՝ կրթության նոր կերպերի և բովանդակության, շենքի հիմնադրագման կոնցեպտների և լուծումների, Կոնսերվատորիայի բարեկամների հիմնադրամի իրականացրած և ընթացիկ նախագծերի, օպերային թատրոնի աշխատանքի միանգամայն նոր բովանդակության և միտումների և, ամենակարևորը, շրջանավարտների՝ կենսերկրորդի կյանքում ընդգրկվելու, շփման, երկխոսության նոր մշակույթ ստեղծելու վերաբերյալ: Օրն ունեցել է իր ուղերձները: Գիտակցելով մշակույթի և հատկապես, երաժշտական մշակույթի դերը մեր երկրում:

ԵՊԿ շրջանավարտի օրը հեռարձակվել է Ա1+ հեռուստաընկերության ուղիղ եթերով: Մայիսի 7-ը՝ իբրև ԵՊԿ շրջանավարտի տոն է որոշվել, նշելու է ամեն տարի, ցավոք այս տարի այն չիրականացավ:

Նյութը քաղված է

<https://www.facebook.com/YerevanStateConsevatory> էջից

✦ Միջազգային երաժշտական ասպարեզում ակտիվ կատարողական, կազմակերպչական և գիտական գործ

ծունեություն ծավալող պոստհար Գայանե Միրզոյանը (Ավստրիա) Հայաստանում էր Վարպետության դասերի ծրագրով:

Ապրիլի 9-13-ը Կապանի համայնքապետարանի աշակերպությամբ և նախաձեռնությամբ իրականացվեցին



Արախար Գայանե Միրզոյանի վարպետության դասը ԵՊԿ-ում

վերապատրաստման և վարպետության դասընթացներ:

Ապրիլի 13-ին և 15-ին Լարային կվարտետի ամբիոնի վարիչի ժամանակավոր պաշտոնակատար Թերեզա Նաչարյանի նախաձեռնությամբ լարային կվարտետի վարպետության դասերը կազմակերպվեցին Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայում: Գայանե Միրզոյանն ավարտել է Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիան՝ պրոֆեսոր Ալեքսանդր Կոսենյանի պոստի դասարանը: Ուսման ընթացքում մեկ տարի մասնակցել է «Էրասմուս» ծրագրին, հաճախել է Ինո Միրկովիչի Երաժշտական ակադեմիան (Խորվաթիա)՝ Յուրի Կոչիչանցու (պլո) և Կիրիլ Ռոդինի (կամերային երաժշտություն) դասարանները: Այնուհետև սովորել է Ավստրիայի Գրացի երաժշտական և դրամատիկ արվեստի համալսարանում (*KUG*)՝ Քրիստիան Օյլերի և Մաթիաս Մաուրերի դասարաններում (պլո), ինչպես նաև Շտեֆան Գյորների («Կարմինա» կվարտետ, Շվեյցարիա) լարային կվարտետի դասարանում (մագիստրատուրա և ասպիրանտուրա):

Մասնակցել է վարպետության դասերի, այդ թվում՝

աշխարհահռչակ պոստհար Քիմ Քաշքաշյանի մոտ, բազմաթիվ փառատոների և մրցույթների:

Այժմ որպես երաժշտագետ Վիեննայի երաժշտական և դրամատիկ արվեստի համալսարանում (*MDW*) իր թեկնածուական աշխատանքի ավարտական փուլում է՝ «Կոմիտասի անվան լարային կվարտետը» առենախոսության թեմայով:

Եղել է «*Glière*» լարային կվարտետի (Վիեննա), ինչպես նաև «*VioArt*» լարային կվարտետի անդամ (Գռաց): Ներկայում Գրացի «*Meran*» լարային կվարտետի անդամ է, որի կազմով իրականացրել է բազմաթիվ ծայնագրություններ:

Գայանե Միրզոյանը կատարողական գործունեությունը հիմնականում նվիրել է կամերային անսամբլին՝ հատկապես լարային կվարտետին, ունեցել է տարբեր համագործակցություններ, այդ թվում՝ Կոմիտասի անվան լարային կվարտետի, «Օբերտոն» լարային օկլետեի և այլ անսամբլների հետ: Աշխատել է և աշխատում է տարբեր նվագախմբային կազմերում (Ավստրիայում, Շվեյցարիայում, Գերմանիայում):

Աշխատել է «Ֆրանց Շուբերտը և ժամանակակից երաժշտությունը» միջազգային կամերային երաժշտության մրցույթում՝ որպես լարային կվարտետի հանձնախմբի ասիստենտ (Գրաց, Ավստրիա 2017 թ.), Մալթայի միջազգային երաժշտական փառատոնի կազմակերպչական ղեկավար (2018), Ավստրիայի Ֆեդերիկի քաղաքի «*Montfort*» կամերային նվագախմբի կազմակերպչական ղեկավար: 2022 թ. մարտից հանդիսանում է Ավստրիայի Գրաց քաղաքի հայկական շաբաթօրյա դպրոցի տնօրեն: Կապանի միջազգային երաժշտական փառատոնում ունեցել է կամերային երաժշտության վարպետության դասընթացներ (2023 թ. հուլիս), որի շրջանակներում էլ ստեղծվեց տաղանդավոր պատանի երաժիշտներից կազմված Անարաս լարային կվարտետը և շարունակում են կատարելագործվել Գայանե Միրզոյանի մոտ:

Գայանե Միրզոյանը կարևորում է՝ կվարտետ անսամբլների մասնակցությամբ բարեգործական համերգներով կրթել ու ճանաչելի դարձնել ակադեմիական երաժշտությունը Հայաստանի մարզերում ապրող երեխաների և պատանիների համար: Արտերկրում որպես անսամբլիստ երաժիշտ

«ԵՐԵՎԱՆԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ»

11

հանրահռչակում է հայ կոմպոզիտորական արվեստը. Ավստրիայում երկար տարիներ իրականացվող համերգներին պրեմիերային կատարմամբ հնչեցրել է Ռուբեն Ալթունյանի, Աշոտ Զոհրաբյանի լարային կվարտետները:

2008 թ. Գայանե Միրզոյանը հիմնել է իր բարեգործական ծրագիրը, որով աջակցում է Երևանի Անուշավան Տեր-Ղևոնդյանի անվան երաժշտական դպրոցի տաղանդավոր և հատուկ կարիքներով երեխաներին:

✧ Ապրիլի 12-ին Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայում կայացան Ցինանդայի համակրվկայան երիտասարդական նվագախմբի (PCYO) անդամների հավաքագրման լուսնները:



Ցինանդայի համակրվկայան երիտասարդական նվագախմբի (PCYO) անդամների հավաքագրման լուսնները

ցեց Նվագախմբային ֆակուլտետի 20 ուսանող՝ ջութակ, ալտ, թավջութակ, ֆլեյտա, կլառնետ, շեփոք, գալարափող, հարվածային գործիքներ մասնագիտացումներով: Լուսններին պատանիներին ունկնդրեցին Ցինանդայի փառատոնի գլխավոր դիրիժոր Կատոլիկ Վանդելին, ներկա էին Նվագախմբի ֆակուլտետի ղեկան Ռուբեն Սմբատյանը և ԵՊԿ սիմֆոնիկ նվագախմբի գեղարվեստական ղեկավար և գլխավոր դիրիժոր Նատալի Գալստյանը:

Նշենք, որ ընտրված երաժիշտները հրավիրվում են մասնակցելու և ելույթ ունենալու Ցինանդայի նվագախմբի 4 շաբաթյա վերապատրաստման ընթացքին:

Փառատոնի ամբողջական ծրագիրը կկայանա 2024 թ. օգոստոսի 31-ից մինչև սեպտեմբերի 8-ը, Վրաստանի Ցինանդայի գյուղում գտնվող հատուկ պատմամշակութային վայրում՝ վրացի նշանավոր գրող, իշխան Ալեքսանդր Զավթավաձեի ամրոց-առանձնատանը: 2017 թ. այս տարածքում կառուցվել է հատուկ բեմահարթակ և 1200 հանդիսատեսների համար նախատեսված հարթակ:

Համակրվկայան երիտասարդական նվագախումբը ստեղծվել է 2019-ին, երաժշտական ղեկավար՝ Զանանդեա Նոսեդա: Նույն թվականից նվագախումբը Վրաստանի Ցինանդայի փառատոնի մշտական նվագախումբն է:

Ցինանդայի փառատոնը հրավիրում է լավագույն կատարողներին, դիրիժորներին, կոմպոզիտորներին, երաժշտագետներին և արվեստագետներին: Փառատոնի նպատակն է հնարավորություններ ստեղծել Կովկասի և հարևան երկրների երիտասարդ երաժիշտների համար՝ ուսումնասիրելու երաժշտական աշխարհը, մասնակցել ակադեմիական երաժշտության մերօրյա ամենավառ ներկայացուցիչների մասնագիտական սեմինարների և վարպետության դասերին:

✧ Մարտի 28-ին կայացավ երաժշտական հոգեբան, հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Ալեքսանդրա Ֆյոդորովայի դասախոսությունը «Հետխորհրդային երաժշտական մանկավարժության էթիկայի խնդիրը: Բռնության անհրաժեշտություն, առաջադեպ, թե՛ իրականություն» թեմայով:



Լիլիթ Եփրեմյան, Ալեքսանդրա Ֆյոդորովա



ԵՊԿ պրոֆեսոր Գայանե Հովհաննիսյանի դասարանի զարկերդյան համերգին

Սերգեյ Ռախմանինով՝ 2-րդ դաշնամուրային Տրիո, *D moll*, II-III մասեր, կատարողներ՝ Ալեքսանդրա Մնացականյան (դաշնամուր), Էլեն Մամիկոնյան (ջութակ), Սուսաննա Մուրադյան (թավջութակ),

Էդգար Հովհաննիսյան՝ դաշնամուրային Կվինտետ, II մաս, կատարողներ՝ Վերժինե Ելյազյան (դաշնամուր), Սյուզանա Ասատրյան (1-ին ջութակ), Անուշ Մարգարյան (2-րդ ջութակ), Լյուդմիլա Հովհաննիսյան (ալտ), Սուսաննա Մուրադյան (թավջութակ):

✧ Մայիսի 17-21-ը Ռիգայում և Վիլնյուսում տեղի ունեցան հայ երաժշտական մշակույթի և Կոմիտաս Վարդապետին նվիրված Համերգ-դասախոսություններ:

«Muzikos Magijos» կազմակերպության հրավերով և «Զվարթնոց Վերածննդի» հիմնադրամի աջակցությամբ, դասախոսությունները վարեց Երևանի Կոմիտասի անվան



պետական կոնսերվատորիայի երաժշտության պատմության ամբիոնի վարիչ, դոցենտ, կոմիտասագետ՝ Լուսինե Սահակյանը:

Բալթյան երկրների հայոց թեմի առաջնորդ՝ Գերաշնորհ Տ. Վարդան Եպիսկոպոս Նավասարդյանի օրհնությամբ՝ 2024 թ. մայիսի 19-ին, Ռիգայի Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում տեղի ունեցավ դոցենտ Լուսինե Սահակյանի առաջին դասախոսությունը: Նույն օրը համերգային ելույթով ներկայացան ջութակահար Ալեքսեյ Կոլեսնիկովը և դուդուկահար Տիգրան Թումանյանը:

Մայիսի 21-ին, Վիլնյուսի «Muzikos Magijos» կազմակերպության սրահում տեղի ունեցավ երկրորդ համերգ-դասախոսությունը՝ ԵՊԿ շրջանավարտ-դաշնակահար Վարդան Գյոդակյանի մասնակցությամբ: Համերգ-դասախոսությունը ներկա էին Բալթյան երկրների Հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Վարդան Եպիսկոպոս Նավասարդյանը, Բալթյան երկրներում Հայաստանի դեսպանության ներկայացուցիչներ, ինչպես նաև հայ համայնքի անդամներ և լիտվացի մտավորականներ:

✧ Մայիսի 2-ին կայացավ Զագրեբի երաժշտական ակադեմիայի պրոֆեսոր Լեոնիդ Մորոկովի վարպետության դասը: Վաստակաշատ մանկավարժը մանրամասն



Զագրեբի երաժշտական ակադեմիայի պրոֆեսոր Լեոնիդ Մորոկովի վարպետության դասին

անդրադարձավ տեխնիկական, գեղարվեստական տարբեր հարցերին՝ բարձր գնահատելով մեր ուսանողների ներուժը: Երիտասարդ ջութակահարները ներկայացան հետևյալ ծրագրով.

Արևիկ Վարդանյան բակալավրական, 3-րդ կուրս, ղեկավար՝ պրոֆեսոր Էդուարդ Թադևոսյան, կատարվեց՝ Յոհան Սեբաստիան Բախի մենանվագ ջութակի 3-րդ Սոնատը, *Largo*,

Արփի Հովհաննիսյան ղեկավար՝ պրոֆեսոր Ալեքսանդր Կոսեմյան, կատարվեց՝ Մորիս Ռավելի «Գնդուհի» Ռապսոդիան ջութակի և նվագախմբի համար, կոնցերտ-մայստեր, ուսումնական ասիստենտ՝ Զառա Խաչատրյան, Մանե Սարգսյան, մագիստրոսական, 2-րդ կուրս, ղեկավար՝ դոցենտ Ռուբեն Սմբատյան, կատարվեց՝ Յոհան Սեբաստիան Բախի մենանվագ ջութակի 1-ին Սոնատը, *Adagio*

Դավիթ Բաբայան, Պ. Չայկովսկու անվան ՄՄԵՂ, ղեկավար՝ պրոֆեսոր Ալեքսանդր Կոսեմյան, կատարվեց՝ Արամ Խաչատրյանի ջութակի Կոնցերտի 1-ին մասը:



Միրիայի Արաբական Հանրապետության, Երաժշտության բարձրագույն ինստիտուտի ներկայացուցիչները ԵՊԿ-ում

✧ Ապրիլի 19-ին Միրիայի Արաբական Հանրապետության, Երաժշտության բարձրագույն ինստիտուտի՝ հանձինս ղեկան Աղնան Ֆայթալլայի և Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի՝ հանձինս Սոնա Հովհաննիսյանի միջև կնքվել է փոխըմբռնման հուշագիր՝ Երաժշտության փոխշահավետ համագործակցությունը զարգացնելու և ընդլայնելու մասին: Փաստաթղթի հիմքում Հայաստանի Հանրապետության և Միրիայի Արաբական Հանրապետության միջազգային համագործակցությունն ամրապնդելն է: Պաշտոնական հանդիպմանը ներկա էր Հայաստանի Հանրապետությունում Միրիայի

13

«ԵՐԵՎԱՆՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ»

12

Արարական Հանրապետության Արտակարգ և լիազոր Դեսպան Ն. Գ. տիկին Նորա Արիսյանը

Նույն օրը դեկան և ուղահար Ադնան Ֆաթիլլան վարպետության դաս անցկացրեց ուղահար ուսանողների հետ և Երևանի Կոմիտասի կոնսերվատորիային նվիրեց ուղ երաժշտական գործիք:

Մայիսի 29-ին Զագրեբի Երաժշտական Ակադեմիայի Միջազգային համագործակցության ղեկավար Էմա Պրոստ Շեպեցին և նույն կրթօջախի Դաշնամուրային ամբիոնի պրոֆեսոր Ռուբեն Դալիբալթայանին ընդունեց ԵՊԿ ռեկտոր Սոնա Հովհաննիսյանը: Հանդիպմանը ներկա էին Գիտական գծով պրոռեկտոր Ծովինար Մովսիսյանը, ԵՊԿ կառավարման խորհրդի նախագահ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր Լիլիթ Երնջակյանը, Դաշնամուրային ֆակուլտետի ղեկան պրոֆեսոր Իրինա Հակոբյանը, Մասնագիտական դաշնամուրի ամբիոնի վարիչ պրոֆեսոր Կարինե Օհանյանը, Միջազգային համագործակցության բաժնի վարիչ Արկադի Ավանետով և Արտերկրի ուսանողների ուսումնական հարցերով պատասխանատու Լիլիթ Մարտիրոսյանը:

Տիկին Էմա Պրոստ Շեպեցը հայտնեց, որ վերջին տարվա ընթացքում Զագրեբի Երաժշտական ակադե-



Զագրեբի Երաժշտական Ակադեմիայի Միջազգային համագործակցության ղեկավար Էմա Պրոստ Շեպեցը և նույն կրթօջախի Դաշնամուրային ամբիոնի պրոֆեսոր Ռուբեն Դալիբալթայանը ԵՊԿ-ում

միայում կայացած՝ ԵՊԿ պրոֆեսոր Կարինե Օհանյանի և ԵՊԿ Օպերային ստուդիայի գեղարվեստական ղեկավար, ՀՀ ժողովրդական արտիստ Հասմիկ Պապյանի անցկացրած վարպետության դասերը, Երաժշտության պատմության ամբիոնի դասախոս Լիլիթ Մարտիրոսյանի՝ հայ երաժշտությանը նվիրված դասախոսությունները խորվաթ ուսանողների մոտ հետաքրքրություն են առաջացրել ERASMUS+ ծրագրի շրջանակներում ուսումնառությունն անցնել Երևանի կոնսերվատորիայում:

Համագործակցության հետաքրքիր հեռանկարներ են ստեղծել փետրվար-մարտ ամիսներին Խորվաթիայում անցկացված ամենամյա «Չարպանքի ժառանգություն» փառատոնը (2024-ին՝ 33-րդը), որն այս տարի նվիրված էր հայ երաժշտարվեստին, նաև, ի նշանավորումն հայ-խորվաթական դիվանագիտական հարաբերությունների 30-ամյակի, ապրիլի 22-27-ը Զագրեբում կայացած Հայ մշակութային շաբաթը: Կրթամշակութային այս իրադարձությունների շրջանակներում տեղի են ունեցել արժեքավոր մասնագիտական շփումներ, խորվաթ հանդիսատեսը հնարավորություն է ունեցել ծանոթանալու հայ երաժշտական մշակույթին, հայոց պատմությանը:

Մեկ շաբաթյա երևանյան այցի աշխատանքային քննարկումներում կնքավորվեն հետագա համագործակցության հեռանկարները:

Մայիսի 20-ին կայացավ ԵՊԿ Կամերային գործիքային անսամբլի ամբիոնի պրոֆեսոր Ալիսա Արգունյանի դասարանական համերգը: Պրոֆեսորի գործունեությունն ակնառու է և արգասաբեր:



ԵՊԿ պրոֆեսոր Ալիսա Արգունյանի դասարանական համերգին

ՇՆՈՐՀԱՎՈՐՈՒՄ ԵՆՐ

Մարտի 27-ին՝ Թատրոնի միջազգային օրը ԵՊԿ Կոմպոզիցիայի ամբիոնի վարիչ դոցենտ Վաչե Շարաֆյանը Հայաստանի թատերա կան գործիչների միության «Արտավազը» մրցանակաբաշխության արժանացել է



Վաչե Շարաֆյան

«Լավագույն երաժշտության հեղինակ» տիտղոսին: Մրցանակը տրվել է Հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմետիայի թատրոնի «Կոլոմբինա» (ռեժիսոր՝ Հակոբ Ղազանջյան) ներկայացման երաժշտության համար (ըստ Ալեքսանդր Բյուկի «Բալագանչիկ» պիեսի, թարգմանությունը՝ Գագիկ Դավթյանի):

Թատերական երաժշտության լավագույն հեղինակի պարգևը Վաչե Շարաֆյանն ստանում է երկրորդ անգամ: Առաջինը շնորհվել էր Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնի «Մասնա ծոեր» ներկայացման համար:

Վերջին տարիներին Վաչե Շարաֆյանը պարբերաբար համագործակցում է Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական («Պեսկո», ռեժիսոր՝ Արմեն Էլբակյան, Ջոն Բրոնդելի «Էվրիդիկե»), Հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմետիայի, Երևանի մշակառդի («Շերամիկ», «Ած-ծես», «Գիրք ծաղկանց») պետական թատրոնների հետ: Կոմպոզիտորի համար դրամատիկական ներկայացումներում աշխատանքը բոլորովին այլ հետաքրքիր բնագավառ է: Ալեքսանդր Բյուկի պիեսները՝ «Արքան հրապարակում», «Բալագանչիկ» («Կոլոմբինա») կոմպոզիտորը հետազայում տեսնում է միավորված առանձին նոր օպերային ժանրում:

«Կոլոմբինա» քնարական դրամայի երաժշտության հեղինակը խնդր էր դրել, որպեսզի ի տարբերություն նախորդ՝ «Արքան հրապարակում» պիեսի երգեցիկ համարները կատարեն դերասաններն, այլ ոչ պրոֆեսիոնալ երգիչները:

Հայտնենք, որ Վաչե Շարաֆյանի համար 2024 թվականը սկսվել է երկու խոշոր համաշխարհային պրեմիերայով, որոնք ղեկավարել է գերմանաբնակ դիրիժոր Ռուբեն Գագարյանը. 3-րդ Սիմֆոնիան հնչել է Գերմանիայում, իսկ «Երկրորդ լուսին» բալետը Երևանում՝ «Հայ կոմպոզիտորական արվեստի 15-րդ փառատոն»-ում կատարել է Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախումբը:

Նիդերլանդներում «Vocaal ensemble Coqu»-ի Հայկական ծրագրում ընդգրկված են կոմպոզիտորի մի քանի ստեղծագործություններ, ներկայացվելու է «Agnus Dei» համաշխարհային պրեմիերան:

Միլենա Հարությունյանը որպես Կոնցերտոմայստերական ամբիոնի մագիստրոսական կրթության 2-րդ կուրսի ուսանող՝ դոցենտ Զարուհի Ղազարյանի ղեկավարությամբ Ղազարյանի Ալմաթի քաղաքում առցանց անցկացվող «Կոզանի անվան 3-րդ միջազգային



Միլենա Հարությունյան

մրցույթ»-ի «Կոնցերտոմայստերական վարպետություն» անվանակարգում ստացել է առաջին մրցանակը (31.03-07.04.2024): Նույն մրցույթում «Art forum of Kazakhstan» միջազգային ստեղծագործական կազմակերպությունը նրան շնորհել է Հատուկ մրցանակ՝ Պյոտր Չայկովսկու ժոնանսի լավագույն կատարման համար:

Իտալիայի Չերվինյան քաղաքում կայացած Citta di Cervignano ջութակի միջազգային մրցույթում առաջին մրցանակին արժանացել է Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի 1-ին կուրսի ջութակահար Շուշաննա Պուշինյանը (Մյուզի Երիցյանի մասնագիտական դասարան, 2023 թվականից դասընթացներ է անցնում ֆրանսաբնակ ջութակահար, միջազգային մրցույթների դափնեկիր Ռոբերտ Ստեփանյանի մոտ:



Շուշաննա Պուշինյան

2-րդ կուրսի քանոնահար Ելենա Թորոսյանը,

Հայ ազգային երաժշտության կատարողական արվեստի ամբիոնի պրոֆեսոր Ծովինար Հովհաննիսյանի ղեկավարությամբ



Ելենա Թորոսյան

«Les etoiles de Paris 2024»-ի («Արվեստների 28-րդ միջազգային մրցույթ և փառատոն»՝ «THE FESTIVAL BRIDGES IN PARIS») Գրան Պրի՝ «Ժողովրդական երաժշտություն, մենակատար, Բանոն» անվանակարգում:

«Հայ ավանդական երաժշտության կատարողական արվեստի ամբիոն»-ի պրոֆեսոր Արգաս Ոսկանյանի

մասնագիտական դասարանում սովորող Արա Գյուլկրեկյանը ՅՈՒՆԵՍԿՕ-ի կատարողական արվեստների համաշխարհային ասոցիացիայի Արվեստների միջազգային մրցույթ «TVCHUMI-2024»-ի «Ժողովրդական երգ» անվանակարգում արժանացել է 1-ին մրցանակի (21.03. 2024):



Արա Գյուլկրեկյան

Հայ ավանդական երաժշտության կատարողական արվեստի ամբիոնի դասախոս Արտյոմ Հակոբյանի մասնագիտական դասարանի 2-ր կուրսի ուսանող Ռազմիկ Հարությունյանը արժանացել է «Արտ Մյուզիք» արվեստի միջազգային XV մրցույթ-փառատոնի «Ժողովրդական, աշուղական, հայրենասիրական երգ» անվանակարգի Առաջին կարգի մրցանակին:



Ռազմիկ Հարությունյան

Պարասպեգ՝ ԱՐՄԻՆԵ ԱԹՈՅԱՆԸ

